1 մարտ 2020

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Հոգեւոր Կարիտաս
Caritas Spirituality

Հայկական Կարիտասի հոգևոր պարբերաթերթը

The Spiritual Magazine of Armenian Caritas

«Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում եւ ընկավ ավազակների ձեռքը, որոնք նրան մերկացրին, վիրավորեցին եւ կիսամեռ թողեցին ու գնացին։ Պատահեց, որ մի քահանա նույն ճանապարհով իջնում էր, նրան տեսավ եւ թողեց անցավ։ Նույնպես եւ մի ղեւտացի, նույն տեղով անցնելիս, տեսավ եւ թողեց անցավ։ Մի սամարացի, որ ճամփորդում էր, նույն տեղով եկավ նրա մոտ եւ տեսնելով նրան՝ գթաց։ Եվ մոտենալով՝ կապեց նրա վերքերը, վրան ձեթ ու գինի լցրեց եւ նրան իր գրաստի վրա դնելով՝ տարավ մի իջեւան եւ խնամեց նրան։ Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, հանեց, իջեւանատիրոջը երկու դահեկան տվեց եւ ասաց. «Խնամի՛ր նրան եւ ինչ որ ծախսես նրա վրա, իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ»։ Արդ, ըստ քեզ, այս երեքից ո՞րը մերձավորի պես վերաբերվեց նրան, ով ավազակների ձեռքն էր ընկել»։ Եվ նա ասաց. «Նա, ով բարիք արեց նրան»։ Հիսուսը նրան ասաց. «Գնա՛ եւ դու նույն ձեւով արա՛»,

Աւետարան ըստ Ղուկասի, 10, 30-37:

«Բարի սամարացին», Վասիլի Սուրիկով, 1884

Այս թերթի ստեղծման նպատակը

Սիրելի՛ «Հայկական Կարիտասի» աշխատակիցներ, կամավորականներ եւ բարեկամներ, Հայկական Կարիտասի 25-ամյա հոբելյանի գեղեցիկ առիթով, որպես մի փոքրիկ նվեր, ձեզ եմ ներկայացնում այս համեստ հոգեւոր թերթը՝ օգնելու համար ձեզ՝ ավելի լավ հասկանալու Կարիտասի առաքելության հոգեւոր արմատները եւ հոգեւոր տեսլականը, որոնց վրա հիմնված են կազմակերպության սոցիալական, աշխատանքային տեսլականը, առաքելությունը եւ ռազմավարությունը։

Ձեր աշխատանքի հոգեւոր արմատների շուրջ խորհրդածելը՝ հավատքի անհատական եւ միասնական ապրումի ձեր փորձառության հետ մեկտեղ, վստահաբար, կօգնեն ձեզ առավել պտղաբերելու ձեր աշխատանքի մեջ, որ, ըստ էության, այլ բան չէ, քան՝ սիրել մարդուն եւ ծառայել մարդու ամբողջական բարօրությանը։ Դուք կոչված եք նմանվելու այն բարի սամարացուն, ում մասին պատմում է Հիսուսը, որպեսզի բացատրի, թե ինչ է նշանակում «սիրի՛ր ընկերոջդ՝ քո անձի պես» պատվիրանը։ Սամարացու նման մենք եւս պետք է միշտ պատրաստ լինենք լսել կարիքի մեջ գտնվող մեր եղբայրների եւ քույրերի, մանուկների եւ ծերերի աղաղակը եւ կանգ առնել, նվիրել ժամանակ, ուժ եւ միջոցներ, ուղեկցել նրանց դեպի ավելի արդար եւ երջանիկ կյանք։

Մարդուն սիրելով՝ մենք կոչված ենք մարդկանց համար ընկալելի, զգալի դարձնելու Աստծո սերը, որ դրսեւորվում է ձեր կատարած աշխատանքի միջոցով. Կարիտասի իրականացրած ծրագրերը մարդու հանդեպ Աստծո սիրո կոնկրետ դրսեւորման հստակ օրինակներ են։ Բայց անհրաժեշտ է այս գիտակցությունը մշտապես նորոգել ձեր մեջ՝ որպես քրիստոնյաների եւ որպես քրիստոնեական բարեգործական կազմակերպության աշխատակիցների՝ մշտապես վերարժեւորելով եւ հիշելով ձեր հոգեւոր ակունքները եւ աստվածային կոչումը։ Այդ գործում ձեզ օգնելու համար է, որ ձեզ հետ միասին ստեղծում ենք այդ ամենի շուրջ զրուցելու, մտածելու, ձեր առաքելության համար աղոթելու առիթներ։ Այս թերթը գալիս է ձեզ հիշեցնելու, պատմելու մեր այդ միասնական հոգեւոր ջանքերի մասին, նաեւ ձեր ուշադրությանը ներկայացնելու տարաբնույթ հոգեւոր նյութեր, որոնք կարող են օգնել ձեր ամբողջական զարգացմանը՝ որպես հոգեւոր բարձր գիտակցություն, մարդկային գեղեցիկ նկարագիր եւ մասնագիտական բարձր որակներ ունեցող անհատներ։

Այս թերթի ստեղծման նպատակներից է նաեւ ձեզ առաջարկել հնարավորություն՝ միմյանց հետ կիսելու ձեր հոգեւոր փորձառությունը՝ հավատքի անհատական միասնական ապրումի անցած ճանապարհը, ներկան եւ ապագայի սպասումները, հոգեւոր ձգտումները, եւ, հատկապես, ձեր հավատքի ապրումը՝ Հայկական Կարիտասում՝ աշխատանքի ընթացքում, ստեղծագործական ջանքերի եւ ձգտումների մեջ։

Ուստի, ապա՛ս եղեք այս փոքրիկ թերթը հարստացնելու ձեր պատմություններով, հոդվածներով, խորհրդածություններով կամ աղոթքներով։ Սա ձեր հոգեւոր ստեղծարարության հարթակն է՝ զուգահեռ ձեր աշխատանքային լայն դաշտին եւ ծանրաբեռնվածությանը։ Վստահ եմ, որ այս թերթը ընթերցելը եւ այս թերթի համար գրառումներ կատարելը ոչ թե առավել կծանրաբեռնի ձեզ, այլ կլինի հոգեւոր հանգստության եւ ուրախալից սփոփանքի առիթ.

«...եւ ձեզ համար հանգիստ կգտնեք, որովհետեւ իմ լուծը քաղցր է, եւ իմ բեռը՝ թեթեւ», Մտթ. 11, 29-30։

Տ. Հովսեփ Գալստյան
Հայկական Կարիտասի Հոգեւոր խորհրդատու

«Հայկական Կարիտասի» գործունեության հոգեւոր հիմքի առավել խոր ընկալման ճանապարհին

«Ով բնակվում է իմ մեջ, եւ ես՝ նրա մեջ,
նա շատ պտուղ է տալիս,
որովհետեւ առանց ինձ
ոչինչ չեք կարող անել»,
Հվհ., 15, 5։

«Կարիտասը», որպես միջազգային բարեգործական կազմերպություն, Աստծո սիրո արտահայտությունն է՝ օգնության կարիք ունեցող մարդկանց հանդեպ, «Աստծո ներկայության նշանը՝ մարդկանց մեջ», ինչպես ասում էր Սբ. Հովհաննես Պողոս Բ Քահանայապետը։

«Հայկական Կարիտասի» Ընդհանուր Նախագահ Արհ. Տ. Ռաֆայել Արքեպս. Մինասյանը վերջերս ասաց.



«Կարիտասը Ընդհանրական Կաթողիկէ Եկեղեցու զավակն է, կամ պարզապես՝ Աստծու Սուրբ Եկեղեցու բարեգործության գործիքը։ Կարո՞ղ եք պատկերացնել՝ այդ զավակը՝ յուրահատուկ նկարագրով, գալիս է աշխարհ՝ Հիսուսի հետ միասին ասելու. «Եկե՛ք ինձ մոտ՝ բոլոր հոգնածներդ եւ բեռնավորվածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ», Մտթ. 11, 28։

Այս ճշմարտությունը մեծագույն մի պատասխանատվություն է դնում մեր ուսերին, որը ստիպում է մեզ քննել, թե արդյոք մեր աշխատանքը, մեր ծրագրերը լիովին ամուր հիմնված են Տիրոջ Ավետարանի սկզբունքների վրա, Նրա Սուրբ Եկեղեցու ուսմունքի վրա։

Ի նկատի առնելով այն փաստը, որ «Հայկական Կարիտասը» Եկեղեցու բարեգործական կամ սոցիալական առաքելությունն իրականացնող, հիմքում հոգեւոր նկարագիր ունեցող մի հաստատություն է՝ ղեկավարությունը շատ կարեւոր է համարում կազմակերպության աշխատանքում հաստատուն տեղ հատկացնել Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի ուսումնասիրությանը, հոգեւոր խորհրդածությանը եւ աղոթական կյանքին, ինչն անհրաժեշտ է՝ Կարիտասի առաքելությունը լավագույն ձեւով իրականացնելու եւ Եկեղեցու առաքելության լայն հունի մեջ իր նախասահմանված գործառույթը կատարելու համար։

Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի առանցքային սկզբունքներից մեկը եւ Եկեղեցու՝ մարդուն ուղղված առաքելության հիմնական նպատակը յուրաքանչյուր մարդուվիրկությունն է՝ անհատի եւ ամբողջ մարդկության համակողմանի զարգացման (integral human development) ճանապարհով։

Տրամաբանական է, որ անհնար է նպաստել կարիքի մեջ ապրող մարդու ամբողջական զարգացմանը, եթե նախ հարատեւ ջանք չխնայենք ինքներս մեր ամբողջական, ներդաշնակ զարգացման համար՝ թե մասնագիտական եւ, թե հոգեւոր ներքին նկարագրով։ Նախ հարկ է մտածել եւ նոր ուղիներ գտնել՝ աշխատակիցների ներդաշնակությունը զարգացնելու համար, որպեսզի հնարավոր լինի հասնել նաեւ մեր աշխատանքի հասցեական անձանց ներդաշնակությանը։

Այս ճշմարտությունը գործնականում արտահայտելու նպատակով Հայկական Կարիտասի բոլոր կենտրոններում («Հայկական Կարիտասի» կենտրոնական գրասենյակում, դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների «Փոքրիկ իշխան» սոցիալական կենտրոններում, տարեցների ցերեկային խնամքի սոցիալական կենտրոններում, «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային հոգածության կենտրոնում, Առողջության առաջնային պահպանության կենտրոնում, «Սաբինե» փոքր խմբով տանը, Ներգաղթյալների ինտեգրման ծրագրերով զբաղվող Երեւանի գրասենյակում) անձնակազմերի համար կազմակերպվում են աշխատաժողովներ կամ հոգեւոր խորհրդածության հանդիպումներ՝ կազմակերպության ինքնության, արժեքների, աշխատանքի վերաիմաստավորման, Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի հիմնական սկզբունքների եւ առանձին թեմաների շուրջ, որոնք, ինչպես ընդունված է Կարիտասում ընդհանրապես, պետք է լինեն քրիստոնեական բարեգործության կամ սոցիալական աշխատանքի գաղափարական հենքը։

Այս աշխատանքը Հայկական Կարիտասի անձնակազմի հետ հայ կաթողիկէ հոգեւորականները եւ կազմակերպության տնօրինությունը տարել են մշտապես՝ տարբեր ձեւաչափերով։

Զուգահեռ, կանոնավոր աշխատանք է տարվում նաեւ Հայկական Կարիտասի շահառուների հետ. հոգեւոր զրույցներ՝

շահառուներին հետաքրքող տարբեր թեմաներով, միասնական աղոթքներ, տոնական միջոցառումներ, բեմադրություններ։

Այս աշխատանքում իրենց լուրջ ներդրումն ունեն եւ միշտ ունեցել են նաեւ համայնքներում աշխատող մեր մյուս հայ կաթողիկէ հոգեւորականները։

Համագործակցությունը եւ միասնական աշխատանքը, անխտրական վերաբերմունքը, բաց լինելը մարդ անհատի առջեւ՝ ընդունելով նրան այնպիսին, ինչպիսին որ կա, քրիստոնեական սիրո գործադրության կարեւորագույն ճանապարհներից մեկն է եւ համահունչ Ընդհանրական Եկեղեցու առաքելական ոգուն՝ ամենուր սփռել Ավետարանի լույսը։

Տ. Հովսեփ

Դրույթներ՝ հիմնարար փաստաթղթերից

Key documents

«Ճանաչի՛ր ինքդ քեզ»։
Սոկրատես

Հայկական Կարիտասի Ռազմավարությունը, բաժին Ա

(ամբողջական տեքստը հասանելի է կազմակերպության պաշտոնական կայքում՝ caritas.am)

Տեսլականը

Սուրբ Գրքով եւ Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի գաղափարներով ոգեշնչված՝ մենք ստեղծում ենք այնպիսի միջավայր, որտեղ մարդիկ միայնակ չեն իրենց կարիքների հետ, որտեղ հարգվում է անձի արժանապատվությունը, պաշտպանված են նրա հիմնական իրավունքները, եւ գերիշխում են արդարությունն ու սերը։

Մեր տեսլականն է՝ մարդկանց կյանքում տեւական դրական փոփոխությունների հասնելը՝ սոցիալական արդարության խթանմամբ եւ Հայաստանում կայուն զարգացման հնարավորությունների ապահովմամբ։

Առաքելությունը

Ն. Ս. Բենեդիկտոս XVI Սրբազան Քահանայապետի «Աստված սեր է» (Deus Caritas est) շրջաբերական նամակում ասվում է. «Սերը, որ Կարիտասի գործունեության հիմքում է, եղել է եւ կլինի միշտ։ Ուստի սերն այն ծառայությունն է, որ Եկեղեցին մշտապես իրականացնում է՝ մեղմելով մարդկանց տառապանքները եւ ինչ-որ չափով բավարարելով նրանց նյութական կարիքները։ Մենք նպաստում ենք աշխարհի ավելի լավը դառնալուն՝ անսահման նվիրվածությամբ կատարելով բարի գործեր։ Սերն այն լույսն է, որ միշտ կարող է լուսավորել աշխարհում աճող խավարը եւ տալ մեզ քաջություն՝ շարունակաբար ապրելու եւ աշխատելու»։

Այս խոսքերից է բխում «Հայկական Կարիտաս»-ի առաքելության հիմքը, որում ասվում է. «Սիրով ու սրտացավությամբ ծառայել տարբեր խոցելի խմբերին՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը»։

Լինելով Միջազգային Կարիտասի (Caritas Internationalis)[1] անդամ՝ «Հայկական Կարիտաս»-ը համամիտ է Քրիստոնեական Եկեղեցու Սուրբ առաքելությանը։ Ավելին, հասարակության լայն շերտերի հետ միասին ներգրավված լինելով գործընկերային բաց հարաբերությունների ոլորտում՝ «Հայկական Կարիտաս»-ը համամիտ է բոլոր այն կազմակերպությունների ու պետական մարմինների հետ, ովքեր իրենց բոլոր ջանքերը ներդնում են մարդկանց ընդհանուր զարգացման, աղքատության վերացման եւ անհատների ընդհանուր բարօրության ապահովմանը հասնելու գործում։

Առանց խտրականության

«Հայկական Կարիտաս»-ը ծառայում է բոլոր կարիքավորներին՝ առանց ազգային, դավանական, կրոնական, ռասսայական, քաղաքական, սոցիալական կամ այլ խտրականությունների։

Էթիկայի կանոնակարգ՝ Միջազգային Կարիտասի անդամ կազմակերպությունների համար

Միջազգային Կարիտասի աշխատանքը հիմնավորված, ուղղորդված եւ սահմանված է Սուրբ Գրքով, Կաթողիկէ Եկեղեցու ուսմունքով եւ Ավանդությամբ, ինչպես նաեւ կարիքի մեջ ապրողների հետ անմիջական շփման եւ սիրո վրա հիմնված մտերմությամբ։ «Կարիտասը Եկեղեցու հոգատարությունն է՝ իր ժողովրդի հանդեպ» եւ արտահայտությունն է առավել ուշադրության՝ աղքատների, մերժվածների ու արհամարվածների նկատմամբ։ Կարիտասը ձգտում է ապահովել

[1] Միջազգային Կարիտասը Կաթողիկէ Եկեղեցու 164 ազգային անդամ կազմակերպությունների ընդհանուր համաձայնություն է, որն աշխարհի 200 երկրներում եւ տարածաշրջաններում մատակարարում է մարդասիրական աջակցություն, զարգացում, սոցիալական ծառայություններ եւ շահերի պաշտպանություն։

անձի ամբողջական զարգացումը եւ թեթեւացնել աղետների, հակամարտությունների ու անարդարությունների հետեւանքները, մարդկային տառապանքը։

Արժեքներ եւ սկզբունքներ

Մարդկային կյանքը սուրբ է՝ սկսած սաղմնավորումից մինչեւ բնական մահ։ Մարդիկ, ստեղծված լինելով Աստծո պատկերով ու նմանությամբ, օժտված են առանձնահատուկ արժանապատվությամբ, քանի որ «բարձր են ամեն ինչից, եւ նրանց իրավունքներն ու պարտականությունները համամարդկային են եւ անձեռնմխելի»։ «Իր ներքին էությամբ մարդը սոցիալական արարած է, եւ, եթե չչփվի այլ մարդկանց հետ, չի կարող ապրել եւ զարգացնել իր ներուժը»։ «Սոցիալական կյանքն ամբողջապես իր անչփոթելի առաջամարտիկի՝ մարդ անհատի արտահայտությունն է», ով «ամենեւին չլինելով սոցիալական կյանքի առարկա կամ պասսիվ տարր, միշտ կա ու կմնա դրա գլխավոր սուբյեկտը, հիմքն ու նպատակը»[2]։

Մարդկային արժանապատվությունն ու մարդ անհատի սոցիալական բնույթը հիմքն ու ոգեշնչումն են հասարակության բարոյական տեսլականի, որոնց կարելի է հասնել, եթե ապրենք՝ առաջնորդվելով հետեւյալ արժեքներով եւ սկզբունքներով։

Արժեքներ

1. Արդարություն

Արձագանքելով հավատքի կանչին՝ մենք ձգտում ենք կառուցել առավել բարոյական հասարակարգ եւ «ճիշտ հարաբերություններ»՝ մեր կյանքում եւ կազմակերպության մեջ, այն համայնքներում, որտեղ գործունեություն ենք ծավալում, եւ, ընդհանրապես, Աստծո արարչագործության մեջ։ Մենք ուղեկցում, ծառայում եւ պաշտպանում ենք այն մարդկանց, ովքեր կարիքի մեջ են եւ արհամարված՝ օգնելով նրանց փոխել այն հասարակությունը, որտեղ ապրում են եւ այն կառույցները, որոնք թույլ չեն տալիս նրանց դուրս գալ այդ աղքատությունից։

2. Ընդհանուր բարիք

Մարդկային արժանապատվության հարգանքը եւ համայնքի մեջ զարգանալու կարողությունը կախված է նրանից, թե ինչպես ենք կազմակերպում մեր հասարակությունը՝ սոցիալապես, կրոնապես, մշակութապես, տնտեսապես, էկոլոգիապես, իրավականորեն ու քաղաքականապես։ Մենք աշխատում ենք Կաթողիկէ Եկեղեցու համաշխարհային համագործակցության շրջանակներում եւ կրոնական այլ ավանդությունների ներկայացուցիչների հետ, կառավարությունների, լայն քաղաքացիական հասարակության ու իշխանությունների հետ՝ պաշտպանելու համար մարդկային արժանապատվությունը, իրականացնելու մարդու անհատական ու սոցիալական իրավունքներն ու պարտականությունները՝ հանուն համընդհանուր բարօրության։

«Մի հասարակություն, որ ցանկանում է եւ նպատակադրված է բոլոր մակարդակներում ծառայել մարդ անհատին, պետք է որպես առաջնային նպատակ ունենա համընդհանուր բարիքը՝ բոլորի եւ ամբողջական մարդ անհատի բարիքը։ Մարդը չի կարող ինքնադրսեւորվել՝ լինելով միայնակ՝ առանց այն փաստի, որ գոյություն ունի ուրիշների «հետ» եւ ուրիշների «համար»[3]։

Համընդհանուր բարօրությունը միշտ ուղղված է դեպի անձի զարգացումը։ «Այն ամենը, ինչ նյութական է, պետք է ենթարկվի մարդ անհատին, այլ ոչ թե հակառակը»[4]։

3. Մարդու ամբողջական զարգացումը

Մենք հասկանում ենք զարգացումն՝ ըստ մարդ անհատի վերաբերյալ ամբողջական աշխարհայացքի՝ ընտանիքի եւ ավելի լայն հասարակության համատեքստում եւ փորձառությամբ՝ հոգեւոր, հոգեբանական, զգացական, ֆիզիկական, նյութական ու տնտեսական բաղկացուցիչներով։ Ամեն տեղ, ուր աշխատում ենք, ձգտում ենք ամբողջ անհատի, ամբողջ հասարակության զարգացմանը եւ անարդար սոցիալական համակարգերի փոխակերպմանը։ Մեր գործունեությամբ մենք ձգտում ենք ապահովել ամուր ու հետեւողական կապ՝ օգնության, վերականգնման ու զարգացման միջեւ։

«Ճշմարիտ լինելու համար՝ զարգացումը պետք է լինի առավել ընդգրկուն, պետք է նպաստի յուրաքանչյուր անհատի եւ մարդու ամբողջական զարգացմանը»[5]։

4. Կարեկցանք

[2] Պիոս 12-րդ, 1944թ. դեկտեմբերի 24-ի ռադիոուղերձը, 5։ AAS 37 (1945), 12

[3] Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի ամփոփ, 165

[4] Վատիկանի Բ Տիեզերաժողով, հովվական սահմանադրություն «Ուրախություն եւ հույս», Gaudium et Spes, 26/3

[5] Պողոս 6-րդ Քահանայապետ, շրջաբեր. նամակ՝ «Ժողովուրդների զարգացման մասին» (Populorum Progressio), 14, 34

Համախմբված լինելով մեկ մարդկային ընտանիքում՝ մենք խորապես ազդվում ենք ուրիշների տառապանքներից եւ ունենք բարոյական պարտավորություն՝ ճանաչելու դրանց արձագանքելու մարդասիրական հրամայականը։ Այդ պարտականությունը էական է թե մեր՝ որպես կաթողիկ կազմակերպության ինքնության, եւ թե՛ համամարդկային ընտանիքի անդամ լինելու տեսանկյուններից։ Այսպիսով, լինելով միջազգային հանրության անդամ, մենք գիտակցում ենք մեր պարտավորությունը՝ տրամադրելու մարդասիրական օգնություն եւ այլոց պարտականությունը՝ ապահովելու, որպեսզի մենք կարողանանք անարգել իրականացնել մեր օգնությունը։

«Քրիստոնեության ծրագիրը՝ Բարի Սամարացու ծրագիրն է, Հիսուսի ծրագիրն է, դա «մի սիրտ է, որը տեսնում է»[6]։ Այսպիսի սիրտը տեսնում է, թե որտեղ սիրո կարիք կա եւ գործում է համարժեք կերպով։ Հիսուս ասում է մեզ. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ արեցիք իմ այս փոքր եղբայրներից մեկի համար, ինձ արեցիք», Մտթ, 25, 40։

5. Նախեւառաջ՝ հանուն աղքատների եւ աղքատների ու ճնշվածների հետ

Առաջնորդվելով Հիսուսի Ավետարանով՝ մենք ընտրում ենք աղքատներին, արհամարվածներին ու ճնշվածներին ուղեկցելու ճանապարհը։ Մենք նվիրված ենք պայքարելու անմարդկային աղքատության դեմ, որն անձին զրկում է արժանապատվությունից ու մարդկային կերպարից։ Մենք առաջնորդվում ենք Աստվածաշնչով՝ աշխատելով ի նպաստ ճնշվածների ազատության, աշխարհի բարիքների հավասար բաշխման եւ օգնում ենք զրկվածներին՝ պատասխանատու լինել իրենց զարգացման համար։ Մարդկանց աղքատությունը մենք ընդունում ենք որպես մեր սեփականը՝ լինելով նրանց կողքին։ Այսպես մենք կկանգնենք նրանց կողքին՝ իրենց կարիքի մեջ եւ կառերեսվենք այն անարդարությանը, որի առջեւ հայտնվել են նրանք։

«Քանդի՛ր անիրաւութեան հանդոյցը, խորտակի՛ր քո վաճառականական խարդախութիւնն ու բռնութիւնը, ների՛ր ու արձակի՛ր նեղեալներին եւ պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները։ Քաղցածների՛ն բաժանիր քո հացը եւ անօթեւան աղքատների՛ն տար քո տունը. Եթէ մերկ մարդ տեսնես՝ հագցրո՛ւ նրան, բայց քո ընտանիքի զաւակին մի՛ անտեսիր», Ես, 58, 6-7։

«Աղքատության դեմ պայքարը բխում է Եկեղեցու՝ աղքատների նկատմամբ առանձնահատուկ սիրուց»։ «Աղքատները չպետք է դիտվեն որպես խնդիր, այլ՝ որպես մարդիկ, ովքեր կարող են լինել բոլորի համար առավել մարդկային ապագայի սկզբունքների կերտողներ»[7]։

6. Հարգանք

Մենք հարգում ենք կրոնական ավանդույթները, մշակույթը, համակարգերն ու սովորույթները, եթե դրանք հարստացնում եւ պաշտպանում են անձի արժանապատվությունը։

«Արդար հասարակարգը կարող է իրականություն դառնալ, երբ այն բացառապես հիմնված է մարդ անհատի անդրանցական (transcendent) արժանապատվության հարգանքի վրա»[8]։

7. Համերաշխություն

Մենք համերաշխ աշխատում ենք աղքատների ու արհամարվածների հետ՝ այդպիսով ձեռք բերելով խաղաղության, արդարության եւ մարդկային զարգացման պտուղները։ Համերաշխությունը միավորում է մեզ՝ միասնական հեռանկարով ստեղծելու մի նոր աշխարհ, որտեղ յուրաքանչյուր մարդ, որպես Աստծո զավակ, ստանում է այն, ինչ ճշմարտապես իրեն է պատկանում։

«Համերաշխությունը որոշակիորեն ընդգծում է մարդու անօտարելի սոցիալական էությունը, յուրաքանչյուրի արժանապատվության ու իրավունքների հավասարությունը, դեպի առավել նվիրյալ միասնության ուղղությամբ անհատների եւ ժողովուրդների միասնական ճանապարհը»[9]։

Ի՞նչ է Կարիտասը

«Կարիտասը Եկեղեցու կարեւոր մի մասն է, այն Եկեղեցում սիրո ինստիտուցիոնալ արտահայտությունն է եւ ունի երկու կողմ՝ գործեր եւ աստվածային, եւ, ըստ այդմ, Կարիտասը Եկեղեցու հենց սրտում է։ Կարիտասը Եկեղեցու խնամքն է՝ մարդկանց նկատմամբ»։

---

[6] Բենեդիկտոս 16-րդ Քահանայապետ, շրջ. Նամակ՝ «Աստված սեր է» (Deus Caritas Est), 31

[7] Սբ. Հովհաննես Պողոս 2-րդ, Խաղաղության համաշխարհային օրվա ուղերձը, 2000, 14։ AAS 92 (2000), 366

[8] Նույն տեղում, 132

[9] Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի ամփոփ, 192

Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետ

Կարիտասի գործունեության դրդապատճառը

«Հուսով եմ՝ կկարողանաք լավագույնս մշակել ձեր սկսած գործերի որակը։ Դարձրե՛ք դրանք, այսպես ասած, պերճախոս՝ նախեւառաջ ուշադրություն դարձնելով ներքին նպատակադրությանը, որ առաջ է մղում ձեր գործերը եւ այն վկայության որակին, որը բխում է ձեր գործերից։

Դրանք հավատքի՛ց մղված գործեր են։ Դրանք Եկեղեցու՛ գործերն են՝ ամենակարիքավորների հանդեպ Եկեղեցու ուշադրության արտահայտությունը»։

Բենեդիկտոս 16-րդ, խոսք՝ Իտալական Կարիտասին, 2011թ. Insegnamenti VII, 2, [2011], 776

«Սերը միշտ կմնա անհրաժեշտություն, նույնիսկ՝ ամենաարդար հասարակության մեջ»,

Բենեդիկտոս 16-րդ, «Աստված սեր է»՝ Deus Caritas Est, 28 b)։

Սրտի պատրաստությունը

«Արհեստավարժ պատրաստվածությունից բացի, Կարիտասի աշխատակիցները կարիք ունեն «սրտի պատրաստության»։ Կարիքն ունեն առաջնորդվելու Աստծո հետ հանդիպման՝ Քրիստոսի մեջ, հանդիպման, որն արթնացնում է նրանց սերը եւ բացում նրանց սրտերը՝ ուրիշների առաջ»։

«Պրակտիկ գործունեությունը միշտ անբավարար կլինի, եթե այն տեսանելի կերպով չարտահայտի սեր՝ մարդու նկատմամբ, սեր, որը սնվում է Քրիստոսի հետ հանդիպումից»։

Բենեդիկտոս 16-րդ, «Աստված սեր է»՝ Deus Caritas Est, 31, 34

Կարիտասի աշխատակիցը, նախեւառաջ, կամավորական է

Ճշմարիտ Բարեգործի, Սուրբ Հովսեփի արհեստանոցի խոնարհ Աշխատավորի, սիրո աշխատանքի Ուսուցչի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի եւ ուսուցումների մասին խորհրդածելը մեզ բերում է մի կարեւոր ճշմարտության.

քրիստոնեական բարեգործական կազմակերպության աշխատակիցը, նախեւառաջ, պետք լինի կամավորական։

Հայկական Կարիտասի աշխատակիցներից շատերը անցել են կամավորական աշխատանքի ճանապարհը, որը նրանց այսօր օգնում է իրենց աշխատանքը կատարել քրիստոնյա կամավորականի հոգեբանությամբ։

Կարիտասում կամավորականները մշտապես մեծ դեր ունեն, որովհետեւ կոչված են հիշեցնելու կամավորական աշխատանքի անհրաժեշտությունը։

Ի՞նչ է կամավորական աշխատանքը

Կամավորության քրիստոնեական իմաստը ճիշտ հասկանալու եւ այն ճիշտ գործադրելու համար մենք պետք է հասկանանք դրա արմատը։ Իսկ արմատը պետք է փնտրել նախ առաջ Ավետարանում, որովհետեւ Քրիստոսն ի՛նքը եղավ առաջին կամավորը, որ ոչ միայն իր ժամանակը, իր կարողությունները, այլեւ իր կյանքը տվեց՝ ամբողջ մարդկության համար՝ դրանով իսկ յուրաքանչյուր մարդ արարածի համար դառնալով կամավոր նվիրումի ամենաառանցքային, բարձրագույն եւ անկրկնելի օրինակը։ Անկրկնելի՝ այն իմաստով, որ Հիսուս Քրիստոսի Անձի մեջ, Աստված Ի՛նքը զոհաբերվեց մեզ համար, Աստված իր կյանքը կամովին դրեց զոհասեղանին՝ մարդու համար, եւ, որպես Մարդու Որդի, գառան պես մորթվեց, որպեսզի մարդուն ազատագրի մեղքի կապանքներից, բոլոր սահմանափակումներից եւ տա կամավոր նվիրման գերագույն այնպիսի մի օրինակ, ինչպիսին չէր կարող տալ ոչ մի մարդկային արարած։ Քրիստոսի օրինակի լույսի ներքո «կամավորություն» հասկացությունը քրիստոնյայի համար նույնական է դառնում «կատարյալ նվիրում», «ինքնազոհաբերություն» եւ «սեր» հասկացություններին, որոնք Քրիստոսի Անձի, կերպարի մեջ նույն իմաստն ունեն եւ արտահայտվում են նույն կերպ։ Այս իմաստով քրիստոնյաներիս համար լինել կամավոր՝ նշանակում է, նախեւառաջ, նմանվել Քրիստոսին, ունենալ անձական երկխոսություն, մտերմություն փորձառություն՝ Հիսուս Քրիստոսի հետ։ Առանց այսպիսի փորձառության, «կամավորության» մեր ընկալումը կլինի հիմքից կտրված եւ, ըստ էության, աննպատակ։ Բենեդիկտոս 16-րդ Քահանայապետը գրում է.

«Քրիստոնյաների համար կամավորական աշխատանքը պարզապես բարի կամեցողության արտահայտություն չէ, այլ

հիմնված է Քրիստոսի հետ անձնական հաղորդության փորձառության վրա»։

Քրիստոնեական կամավորության գլխավոր ելակետը կամ դրդապատճառը պետք է լինի Քրիստոսի հետ կատարյալ նմանության ուժգին փափագը, իսկ նպատակը՝ մարդու կամ մարդկային հասարակության ամբողջական բարիքը, որը դարձյալ անհնար է պատկերացնել՝ առանց Քրիստոսի հետ միության։ Որովհետեւ Քրիստոսի կամավոր ինքնազոհաբերության նպատակը եւս մարդն է՝ մարդու փրկությունը, մարդուն Աստծո հետ միության վիճակին վերադարձնելը, ինչից մարդը զրկվեց մեղսագործության պատճառով։

Խորհրդածե՛նք առաջին կամավորի՝ Տեր Հիսուս Քրիստոսի Անձի մասին՝ ըստ ավետարանական դրվագների։ Ինչ որ Հիսուս արեց իր երկրային կյանքի ընթացքում, արեց՝ առանց հատուցում պահանջելու՝ ձրիաբար։ Որովհետեւ Աստված իր սերը մարդուն տվեց եւ տալիս է ձրիաբար, փոխարենը մեզնից պահանջում է ոչ թե դրամ, ոչ թե ինչ-որ իր, այլ՝ մեր սերը եւ մեր մտերմությունը Իր հետ, մեր՝ Իրեն նմանվելու ջանքերը։ Աստված ուզում է, որ մենք Իրեն նմանվենք՝ մե՛ր իսկ երջանկության համար, որպեսզի մենք սովորենք սիրել ինքնին Սե՛րը, ինքնին Բարի՛ն, մարդու՛ն եւ Աստծո ամբողջ ստեղծագործությու՛նը։ Սա՛ է Աստծուն նմանվելը, որովհետեւ «Աստված սեր է», Ա Հվհ.4։

Երբ Հիսուս աշակերտներին ուղարկեց հիվանդներին բուժելու, Աստծո Արքայությունը քարոզելու, ասաց հետեւյալը.

«Հիւանդներին բժշկեցէ՛ք, բորոտներին մաքրեցէ՛ք, դեւերին հանեցէ՛ք, ձրի առաք, ձրի էլ տուէ՛ք։ Մի՛ ունեցէք ոչ ոսկի, ոչ արծաթ եւ ոչ էլ պղինձ դրամ՝ ձեր գոտիների մէջ, ոչ պարկ ճանապարհի համար, ոչ երկու զգեստ, ոչ կոշիկներ եւ ոչ էլ ցուպ, որովհետեւ մշակն արժանի է իր կերակրին», Մտթ. 10, 8-10։

Աշակերտները եւ մենք ամեն ինչ, որ ունենք ձրիաբար ընդունել ենք Աստծուց՝ որպես նվեր եւ ընդունել ենք անվաստակ կերպով, հետեւաբար պարտավոր ենք նոյն կերպ հատուցել Աստծուն՝ ձրիաբար ծառայելով մարդկանց եւ արարչագործությանը։

Կամավորականի «հավատամքը» (credo)

Որպես քրիստոնյա կամավորականներ, որ հանձն ենք առել նմանվել Քրիստոսին, պետք է ձգտենք Աստծո կամքի հետ ամենօրյա համաձայնության։

Առաջարկում եմ ամեն օր կրկնել այս խոսքերը՝ որպես առաջնորդող սկզբունքներ.

1. Ես կամենում եմ ինձ համար այն, ինչ Աստվա՛ծ է կամենում ինձ համար,

2. Ես ուզում եմ մտածել այն, ինչ Հիսու՛ն է մտածում՝ հիշելով Սբ. Պողոսի խոսքերը. «Զեզանից իւրաքանչիւրը թող խորհի այն, ինչ որ կայ Քրիստոս Յիսուսի մէջ...», Փիլ.2, 5-7,

3. Ես ուզում եմ անել այն, ինչ արեց եւ ամեն օր անում է Հիսուս՝ ինձ եւ բոլոր մարդկանց համար,

4. Ես ուզում եմ ամեն վայրկյան իմ բոլոր մտքերս, գործերս, ցանկություններս, կյանքս նվիրել Քրիստոսին,

5. Ես ուզում եմ այդ ամենը ծառայեցնել **միայն** Քրիստոսին, Իր Սուրբ Եկեղեցուն եւ բոլոր մարդկանց՝ անկախ նրանից, թե ինչպիսի մարդիկ են, ինչին են հավատում, ինչպես են ապրում եւ ինչ ազգության են,

6. Ես ուզում եմ հոգ տանել ամբողջ արարչագործության մասին, որովհետեւ արարչագործության հեղինակն Աստված է, որ նաեւ ինձ է ստեղծել,

7. Այն, ինչ Աստված ինձ տվել է, միայն իմը չէ, այլ ծառայելու է ոչ միայն իմ հոգու եւ մարմնի փրկության, այլեւ՝ ամբողջ մարդկության փրկության եւ արարչագործության խնամքի համար,

8. Ամենակարեւորը ոչ թե ես եմ՝ որպես առանձին անհատ, այլ՝ Քրիստոս՝ իմ մեջ («Քրիստոսի հետ խաչը ելայ, կենդանի եմ այսուհետեւ, բայց ոչ թէ ես, այլ իմ մէջ ապրում է Քրիստոս», Գղ. 2, 20),

9. Ես կարող եմ եւ պե՛տք է բոլոր մարդկանց մեջ եւս տեսնեմ Քրիստոսի ներկայությունը, Աստծո զավակ լինելու անջնջելի փաստը՝ անկախ նրանից՝ սիրում եմ նրանց, թե ոչ («քանի որ իմ այս փոքրիկ եղբայրներից մէկին արեցիք, այդ ի՛նձ համար արեցիք», Մտթ.25,40),

10. Ճիշտ Քրիստոսի նման ե՛ս էլ ուզում եմ ոչ միայն հանդուրժել մարդկանց, այլեւ՝ նեղություն կրել Աստծո համար եւ նրանց համար։ Ես պատրաստ եմ ծառայել առանց նյութական ակնկալիքի՝ անկախ նրանից, թե մարդիկ ինչ կմտածեն իմ մասին, պատրաստ եմ տանելու ծաղր եւ, նույնիսկ, հալածանքներ, ֆիզիկական դժվարություններ՝ հիշելով, որ Աստված կհոգա ամեն ինչի մասին։

Տ. Հովսեփ

Կաթողիկէ սոցիալական ուսմունքի շավիղներով

Ի՞նչ է կաթողիկէ սոցիալական ուսմունքը եւ ի՞նչ տեղ ունի Կարիտասի առաքելության մէջ

Հայկական Կարիտասի ռազմավարության տեքստում ամրագրված է, որ Կարիտասի գործունեությունը առաջնորդվում է նախեւառաջ Աստվածաշնչով եւ Կաթողիկէ[10] Եկեղեցու սոցիալական ուսմունքով։ Կաթողիկէ սոցիալական ուսմունքը տրամադրում է սոցիալական աշխատանքի համար անհրաժեշտ սկզբունքները, մարդուն եւ նրան շրջապատող իրականությունը քրիստոնեական լույսի ներքո ընկալելու, գնահատելու տեսանկյունը եւ մեթոդները, որոնք բխում են Քրիստոսի հանդեպ հավատքի փորձառությունից եւ Տիրոջ Սուրբ Ավետարանից։

Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքը մարդ անհատի, հասարակության եւ հասարակական հարաբերությունների շուրջ Կաթողիկէ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշման ամբողջությունն է։

Սոցիալական ուսմունքը մշակելով՝ Եկեղեցին նպատակ ունի ոչ միայն արտահայտել տարբեր հասարակական երեւույթների մասին իր ուսումնասիրությունների արդյունքները, այլեւ՝ առաջարկել լուծումներ՝ ավելի արդար հասարակություն կառուցելու համար։

Կարիտասի բոլոր ծրագրերում պետք է գործնականորեն առավելագույնս արտահայտված լինեն Կաթողիկէ սոցիալական ուսմունքի մեջ մեկնաբանված եւ առաջարկված արժեքներն ու սկզբունքները։ Դրանց մասին կարդում ենք նաեւ Միջազգային Կարիտասի էթիկայի կանոնակարգում, որից մի հատված ներկայացրել ենք այս թերթում։ Դրանց մասին թերթի այս եւ առաջիկա համարներում կխոսենք առավել մանրամասն, քանի որ Կարիտասի աշխատակիցների համար, ինչպես բազմիցս նշել եմ մեր հանդիպումների ժամանակ, խիստ կարեւոր է դրանց իմացությունը։ Միջազգային Կարիտասի անդամ կազմակերպությունների աշխատակազմերի Վարվեցողության կանոնների մեջ գրված է.

«Հետեւել, կամ, առնվազն, հասկանալ եւ հարգել Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական եւ բարոյական արժեքները եւ ուսմունքը»։

Սոցիալական ուսմունքի միջոցով Եկեղեցին այսօրվա մարդուն հասկանալի լեզվով ու հասկացություններով մեկնաբանում է Աստծո կողմից հայտնված ճշմարտությունները, բարոյական կյանքի նորմերը, մարտ անհատի գոյության իմաստն ու նպատակը՝ սոցիալական հարաբերությունների մեջ դրանց կիրառելիությանը նպաստելու համար։ Հետեւաբար, որքան լավ հասկանանք սոցիալական ուսմունքը, այնքան ավելի արդյունքվետ կլինի մեր աշխատանքը՝ որպես Եկեղեցու սոցիալական առաքելություն եւ այնքան ավելի ճիշտ կկառուցենք մեր մարդկային հարաբերությունները կազմակերպության աշխատակիցների միջեւ եւ շահառուների հետ։

Մենք՝ որպես Հայկական Կարիտասի աշխատակիցներ, այսօր կարո՞ղ ենք ու ունե՞նք առաքելություն՝ լինելու Եկեղեցու խոսքը՝ Տիրոջ Բարի լուրը, մարդկանց հասցնողներ, մեկնաբանողներ՝ առավել մեր եղբայրասիրական գործերով, մարդկանց ցույց տալով, որ Եկեղեցին, այսինքն՝ մենք բոլորս, յուրաքանչյուր կարիքավորի կողքին է՝ նրանց **գործնական կերպով** ցույց տալով, թե ինչքա՞ն է Աստված սիրում նրանց եւ որ Աստված նրանց սիրում է մե՛ր միջոցով. մենք կոչված ենք լինելու **գործիքները՝ աստվածային սիրո փոխանցման**, թափանցիկ ապակիներ, որոնց միջոցով Աստծո սիրո ջերմացնող լույսը պետք է հասնի մարդկանց, ովքեր ապրում են անտարբերության եւ մեղքի խավարի մեջ։ Այս առաքելությունը լավ կատարելու համար մենք **կարիքն ունենք լավ իմանալու Եկեղեցու սոցիալական ուսմունքը**։

Այս մտածումով եւ ձեզ օգտակար լինելու համար կներկայացնեմ մի քանի թեմաներ՝ ըստ «Եկեղեցու սոցիալական ուսմունքի ամփոփ» ձեռնարկի՝ մեկնաբանություններով՝ ավելի պարզ դարձնելու համար։

«Ավետարանով «բեղմնավորել» եւ Ավետարանով «խմորել» հասարակությունը

«Եկեղեցին, իր սոցիալական ուսմունքով նպատակ ունի ազդարարել եւ կիրառելի դարձնել Ավետարանը՝ մարդկային հարաբերությունների բարդ համատեքստում։ Խոսքը գնում է ոչ թե պարզապես այն մասին, որ Եկեղեցին պետք է հասնի մարդուն՝

---

[10] «Կաթողիկէ» բառը նշանակում է՝ ընդհանրական։ Այսպես կոչվում է Տեր Հիսուս Քրիստոսի հիմնած մեկ, Սուրբ Ընդհանրական Եկեղեցին։ Միջազգային Կարիտաս բարեգործական կազմակերպությունը հիմնվել է եւ ղեկավարվում է Կաթողիկէ Եկեղեցու կողմից։ Ներկայում Միջազգային Կարիտասի նախագահն է՝ Կարդինալ Լուիս Թագլեն։

հասարակության մեջ... Եկեղեցին պետք է Ավետարանով «բեղմնավորի» եւ Ավետարանի «թթխմորով հունցի» ինքնի՛ն հասարակությունը[11]։ Հետեւաբար, Եկեղեցու համար մարդու կարիքների մասին հոգ տանելը նշանակում է նաեւ դեպի հասարակություն ուղղել իր միսիոներական եւ փրկագործական եռանդը։ Հասարակության մեջ մարդկանց միասին ապրելու ձեւերը հաճախ որոշում են կյանքի որակը եւ, ուրեմն, այն պայմանները, որոնցում յուրաքանչյուր մարդ հասկանում է ինքն իրեն եւ որոշումներ է կայացնում, որոնք վերաբերում են իրեն եւ իր կոչմանը։ Այս պատճառով Եկեղեցին անտարբեր չէ այն որոշումների նկատմամբ, որոնք կայացվում են հասարակության մեջ, այն ամենի, ինչ որ արտադրվում է կամ մարդկային կենսափորձի նկատմամբ։ Եկեղեցին ուշադիր է բարոյականի նկատմամբ, այսինքն՝ սոցիալական կյանքի ճշմարտապես մարդկային եւ մարդկայնացնող գործոնի նկատմամբ։ Հասարակությունը, դրա հետ մեկտեղ նաեւ քաղաքականությունը, տնտեսությունը, աշխատանքը, իրավունքը, մշակույթը, պարզապես աշխարհիկ կամ աշխարհական միջավայր չեն եւ ուրեմ դուրս կամ խորթ չեն փրկագործությունից։ Հասարակությունը՝ այն ամենով հանդերձ, ինչ տեղի է ունենում դրանում, վերաբերում է մարդուն։ Հասարակությունը բաղկացած է մարդկանցից, իսկ «նրանք Եկեղեցու առաջնային եւ հիմնական ճանապարհն են»[12]։

Այս մեջբերված ընդարձակ հատվածից կարելի է փաստել, որ սոցիալական ուսմունքի միջոցով Եկեղեցին ջանում է կատարել Տիրոջից իրեն վստահված առաքելությունը՝ տարածել Ավետարանը՝ հասարակական հարաբերություններում։ Եկեղեցին սոցիալական ուսմունքի միջոցով ուզում է ասել, որ Ավետարանը միշտ արդիական է եւ կիրառելի՝ մարդու եւ ամբողջ հասարակության փրկության, մեղքի գերությունից ազատագրման եւ նոր հասարակարգի կամ Աստծո Արքայության կառուցման համար։ «Սոցիալական ուսմունքը ազատագրող խոսք է՝ Ավետարանի արձագանքը, որը հնչում է Եկեղեցու շնորհիվ՝ մարդկության այսօրվա՛ մեջ»[13]։ Սա նշանակում է, որ սոցիալական ուսմունքը մարդկանց օգնում է ունենալ վսեմ հույսեր եւ վստահություն՝ ներկայի ու ապագայի հանդեպ, հավատալ սիրույն, ավելի արդար եւ խաղաղ հասարակարգի հնարավորությանը։ Սոցիալական ուսմունքը շեշտում է մարդու աստվածատուր, անձեռնմխելի արժանապատվությունը եւ կոչումը՝ ինքնարտահատվելու համայնքային հարաբերություններում ինքնանվիրման միջոցով՝ նմանվելով իր Արարչին, ով իր աստվածային էության մեջ սիրո հավերժական հարաբերությունների, համայնքի առաջին եւ կատարյալ օրինակն է։ Այս իմաստով սոցիալական ուսմունքը գալիս է մարդուն օգնելու՝ զարգացնելու իր նմանությունը իր Արարչի հետ եւ իր սոցիալականացման ճանապարհին արտացոլելու Սուրբ Երրորդության անձերի միջեւ գոյություն ունեցող սիրո հարաբերությունները։ Ինչպես Ավետարանն է մարդու համար Աստծո կողմից շնորհված մի սանդուղք՝ հասնելու մարդուս աստվածանմանության բարձունքներին, այնպես էլ սոցիալական ուսմունքն է կոչված լինելու ժամանակակից մարտահրավերներին Ավետարանի համաձայն արձագանքող մի օգնություն կամ գործիքակազմ՝ ավելի արդար հասարակարգ կառուցելու համար՝ «սիրո քաղաքակրթություն», ըստ Սբ. Պողոս 6-րդ Քահանայապետի արտահայտության։

Սոցիալական ոլորտի վերաբերյալ խոսք ասելը Եկեղեցու համար չի նշանակում շեղվել իր հոգեւոր՝ գերբնական առաքելությունից, այլ՝ ճիշտ հակառակը. սոցիալական իրականության մասին խոսելով՝ Եկեղեցին կոչված է բնական կամ սոցիալական իրականությունը բարձրացնել դեպի գերբնականը կամ աստվածայինը, ինչը եւ իր բուն առաքելությունն է։ «Գերբնականը չի կարելի ընդունել որպես մի էություն կամ տարածություն, որը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է բնականը, այլ պետք է ընդունել որպես բարձրացում բնականի։ Այսպիսով, արարչագործության եւ մարդկային իրականությունից ոչինչ խորթ չէ գերբնականին եւ հավատքի ու շնորհի աստվածաբանական իրականություններին, այլեւ գերբնականի մեջ ճանաչված է, ընդունված եւ այդ աստիճանի բարձրացված»։ Բնականը եւ մարդկայինը գերբնականին եւ աստվածային բարձրացնող կատարյալ անձը եւ օրինակը Հիսուս Քրիստոսն է, որ դա կատարեց՝ Իր աստվածային Անձի մեջ անքակտելի, խորհրդավոր կերպով միավորելով աստվածայինը եւ մարդկայինը, Սուրբ Երրորդությունը եւ մարդ արարածին, հաշտեցնելով մարդուն իր Արարչի հետ, վերականգնելով այն կապը, որը քանդվել էր Ադամի մեղքի պատճառով։ Ուրեմն, Հիսուս Քրիստոս իր Անձի մեջ Աստծո հետ հաշտեցնում է ոչ թե մեկ մարդու, այլ

[11] Հմմտ.՝ Վատիկանի 2-րդ ժողով, հովվական սահմանադրություն «Ուրախություն եւ հույս»՝ Gaudium et spes, 40

[12] Սբ. Հովհաննես Պողոս 2-րդ, շրջ. նամակ «Մարդու Փրկիչը»՝ Redemptor hominis, 14, Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 62

[13] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 63

ամբո՛ղջ մարդկությանը եւ ամբողջական մարդուն՝ նրա հասարակական հարաբերություններով հանդերձ՝ դրանք եւս ընդգրկելով իր փրկչական գործում, սրբագործելով եւ վերաիմաստավորելով. «Մարդն ամբողջությամբ՝ ոչ միայն հոգին կամ իր անձնականության մեջ մեկուսացված էությունը, այլ նաեւ՝ անհատականությունը եւ անհատների ընդհանրությունը, մտնում է Ավետարանի փրկարար տնօրինության մեջ»[14]:

Մարդու սոցիալական կապերին եւ հարաբերություններին անդրադառնալը, դրանք Ավետարանի լույսի ներքո վերլուծելը, սոցիալական խնդիրների լուծման սկզբունքներ առաջարկելը Եկեղեցու համար առավել կարեւոր է հատկապես մեր օրերում, երբ մարդու կախվածությունը սոցիալական հարաբերություններից, կապերի բազմազանությունը օրեցօր ընդլայնվում եւ խորանում են, իսկ սոցիալական հարցերը դառնում են ավելի համընդգրկուն՝ ավելի սերտորեն առնչվելով նաեւ արարչագործության խնամքի՝ բնապահպանական հարցերին, ինչպես շեշտում է Ֆրանցիսկոս Քահանայապետն իր 2015թ. «Գովեմ զՔեզ» (Laudato si') շրջաբերականում։

Սոցիալական ուսմունքը, լինելով Եկեղեցու ավետարանացման առաքելության կարեւոր մի ճանապարհ, տրամադրում է Ավետարանի գործնական կիրառելիության մեխանիզմները, սկզբունքները եւ փաստացի վկայություններ։ Սոցիալական ուսմունքը մարդու ամենօրյա աշխատանքը, չարչարանքը սերտորեն կապում է Քրիստոսի հանդեպ սիրո վկայության հետ եւ սովորեցնում է՝ ինչպես վկայել եւ ինչպես սրբացնել աշխատանքը, ջանքերը եւ ձգտումները, ամբողջ մարդկային գործունեությունը եւ կյանքը։ Վկայության հստակ օրինակ է Կարիտասի եւ եկեղեցական այլ բարեգործական կազմակերպությունների աշխատանքը։

Պետք է հստակեցնել, որ Եկեղեցին իր սոցիալական ուսմունքը մշակելով՝ չի ուզում պատասխանատվություն ստանձնել սոցիալական կյանքի որեւէ ոլորտի համար, այսինքն չի պատրաստվում անմիջականորեն ղեկավարել որեւէ ոլորտ կամ առաջարկել կառավարման, հասարակական կազմակերպվածության հստակ համակարգեր, մոդելներ, չի մտնում տեխնիկական հարցերի մեջ, այլ առաջարկում է վարվեցողության ընդհանուր սկզբունքներ եւ առաջարկներ, գործելակերպի դրդապատճառներ եւ նպատակներ, որոնք համահունչ են իր բուն առաքելությանը՝ ազդարարել Տիրոջ Ավետարանը եւ մարդու փրկության ավետիսը՝ հետեւելով Հիսուս Քրիստոսի օրինակին։ Հիսուս Քրիստոս, լինելով Աստծո Որդի, դարձավ մարդ եւ մարդուն հասկանալի լեզվով, սեփական մարդկային կյանքի օրինակով մարդկանց տվեց վարվեցողության ընդհանուր սկզբունքներ, արժեքներ, հավատքի եւ նվիրման, սիրո գերագույն օրինակ, որոնց համաձայն մարդիկ պետք է իրենց հավատքի, բանականության օգնությամբ կազմակերպեն, զարգացնեն սեփական անհատական եւ հասարակական կյանքը։ Նորից հստակեցնելով այս կետը՝ պետք է շեշտել, որ Կաթողիկէ Եկեղեցին չի պատրաստվում ինքն իրենով փոխարինել որեւէ հասարակական կառույց՝ պետությանը կամ այլ կազմակերպությունների, այլ ուզում է Աստծո Խոսքը, Ավետարանը առավելի հասանելի դարձնել մարդու համար եւ աշխատել, որ այն դրական ազդեցություն ունենա մարդու հասարակական կյանքում։ Որովհետեւ Աստծո Խոսքը պետք է ոչ միայն լսել, այլեւ՝ կատարել։ «Փրկության պարգեւին մարդը պետք է պատասխանի ոչ թե մասնակի կամ վերացական համաձայնությամբ, ոչ միայն բառերով, այլեւ՝ **իր ամբողջ կյանքով, իր բոլոր հարաբերություններով**, որպեսզի ոչ մի բան չթողնի սրբապղծող եւ աշխարհիկ կյանքին, որ անտարբեր եւ խորթ է փրկության հանդեպ»[15]։

Սոցիալական ուսմունքը, հետեւաբար, Եկեղեցուն չի ապահովում արտոնյալ տեղ կամ շահույթ կամ տնտեսական, քաղաքական կյանքին միջամտելու հնարավորություն, այլ Եկեղեցին «ունի իրավունք ավետարանելու սոցիալական ոլորտում, այսինքն՝ հռչակել Ավետարանի ազատագրող խոսքը արտադրության, աշխատանքի, ձեռներեցության, ֆինանսների, առեւտրի, քաղաքականության, իրավաբանության, մշակույթի, հաղորդակցության բարդ աշխարհում, որտեղ ապրում է մարդը»[16]։

Այդ իրավունքը միաժամանակ եւ **պարտականություն է**, որովհետեւ դա Քրիստոսի կողմից Եկեղեցուն հանձնարարված առաքելության մի մասն է. «Վա՛յ ինձ, եթե չքարոզեմ Ավետարանը», Ա Կոր. 9, 16։ Պողոս առաքյալի այս խոսքերը կոչ են Եկեղեցուն՝ քայլելու ավետարանացման բոլոր ճանապարհներով, օգտագործել բոլոր ողջամիտ միջոցները՝ Ավետարանը հասցնելու ոչ միայն առանձին անհատներին, այլեւ՝ հասարակական հաստատություններին։ Սա մեզ հիշեցնում է մեկ այլ կարեւոր փաստ՝ այն, որ կրոնական կյանքը չի կարելի սահմանափակել միայն մասնավոր կյանքի

[14] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 65
[15] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 70
[16] Նույն տեղում

շրջանակներում[17], ինչպես եւ չի կարելի փրկության ավետիսը վերագրել միայն հանդերձյալ կյանքում փրկվելու հույսին, որը չի կարող լույս սփռել մեր երկրային կյանքին[18]։

Ավետարանը եւ հավատքը հասարակական նշանակություն ունեն, եւ քանի որ մեղքը, անարդարությունը քայքայիչ հետեւանքներ ունեն հասարակության մեջ, Եկեղեցին չի կարող անտարբեր մնալ հասարակական իրադարձությունների նկատմամբ[19]։

Եկեղեցին պարտավոր է բարոյական արժեքները ազդարարել ամենուրեք, նաեւ՝ հասարակական կարգերի վերաբերյալ եւ դատողություն անել մարդկային ամեն տեսակ գործունեության վերաբերյալ, եթե դա պահանջվում է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության եւ հոգիների փրկության համար[20]։

Սոցիալական ուսմունքը Եկեղեցու բարոյական աստվածաբանության մի մասն է եւ ուսումնասիրում է մարդու բարոյական վարքը հասարակության մեջ եւ՝ տեղական եւ՝ միջազգային հարթության վրա, մեկնաբանում է, թե արդյոք այն համահունչ է մարդու վերաբերյալ ավետարանական պատգամին՝ եւ մարդու երկրային եւ երկնային կոչման կողմերով։ Այդ դատողությունների նպատակը մարդուն ուղղորդելը կամ ուղեկցելն է՝ դեպի արդար հասարակարգ եւ դեպի փրկություն։ Այլ խոսքով՝ սոցիալական ուսմունքը աստվածաբանություն է, որի նպատակը գործնական է՝ **ուղղորդել մարդկության վարքը**[21]։

Սոցիալական ուսմունքը մարդուն օգնում է երեք կարեւոր մակարդակներում.

1.դրդապատճառների հիմնարար մակարդակում,

2.նորմատիվային ուղղորդիչ մակարդակում,

3.որոշումների կայացման մակարդակում։

Սոցիալական ուսմունքը տեսական մի համակարգ չէ, այն կարծես Եկեղեցու ուղերձն է՝ մարդկությանը, **մի նամակ** է, որի մեջ, ճիշտ առաքյալների նման, Եկեղեցին խորհուրդ է տալիս մարդկությանը, թե ինչպես պետք է ապրել միասին, որպեսզի Աստծու կամքը կատարվի եւ չարհամարվի։ Դրա վկայությունն է այն, որ սոցիալական ուսմունքը շարադրված է քահանայապետերի շրջաբերական նամակներում, որոնք կազմում են հիմքը սոցիալական ուսմունքի ամբողջ համակարգի։

Սոցիալական ուսմունքը նաեւ մի գեղեցիկ վկայություն է այն ճշմարտության, որ հավատքը եւ մարդկային բանականությունը փոխլրացնում են միմյանց եւ կարող են լինել ասնահմանորեն պտղաբեր։ Մարդու միտքը, լուսավորվելով հավատքի լույսով եւ եղբայրասիրությամբ, կարող է նվաճել ստեղծագործական անհասանելի թվացող բարձունքներ եւ կառուցել բարձրորակ հասարակարգ։ Հավատքի լույսով է, որ մարդու բանականությունը կարող է լավագույն ձեւով հասկանալ մարդկային արժանապատվության արժեքը եւ մարդու ամբողջ ներուժը՝ համապարփակ իմաստով եւ ճիշտ ուղղությամբ գործադրել այն։ «Սոցիալական ուսմունքը գիտելիք է՝ լուսավորված հավատքով, եւ հենց այդ պատճառով էլ ճանաչողության ավելի բարձր կարողության արտահայտություն է»[22]։

Բաց՝ այլ գիտական դրական ձեռքբերումների առջեւ

Որպեսզի սոցիալական ուսմունքը կարողանա մարդուն առաջարկել սոցիալական իրականությունների մասին միասնական, ամբողջական ճշմարտությունը, այն բաց է ընդունելու հասարակական գիտությունների արժեքավոր նվաճումները, արժեքավոր՝ Ավետարանի բարոյականությանը համապատասխանության առումով։ «Եկեղեցին հասկանում է, որ հնարավոր չէ մարդու մասին խոր գիտելիքների հասնել միայն աստվածաբանության օգնությամբ՝ չօգտվելով գիտելիքի բազում այլ ոլորտներից»[23]։ Օգտվելով այլ գիտությունների ձեռքբերումներից՝ Եկեղեցու սոցիալական ուսմունքը քայլում է ժամանակին համընթաց, միշտ քաջատեղյակ է իրականությանը եւ համոզիչ է իր փաստարկներում։

Սոցիալական ուսմունքը լուծում է երկու խնդիր՝ **հռչակել** եւ **բացահայտել իրականությունը**։

Եկեղեցին հռչակում է քրիստոնեական արժեքներն ու սկզբունքները եւ դրանք կիրառելու հնարավոր միջոցները՝ դրանով ոչ թե ինքնուրույն ձեւավորելով հասարակական կառույցներ, այլ՝ ազդելով մարդկային խղճի վրա եւ կազմավորելով մարդու «սիրտը»[24]։

Եկեղեցին սոցիալական ուսմունքի միջոցով բացահատում կամ մերկացնում է դառն իրականությունը՝ մեղքի հետեւանքները, հատկապես հավաքական մեղքը, մեղավոր համակարգերը, որոնք ոտնահարում են մարդու իրավունքները եւ արժանապատվությունը եւ հանգեցնում են

[17] Սբ. Հովհաննես Պողոս 2-րդի ուղերձը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, 2 դեկտեմբերի, 1978թ.
[18] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 71
[19] Սբ. Պողոս 6-րդ, առաքելական հորդոր Evangelii nuntiandi, 34
[20] Եկեղեցու կանոնների կոդեքս, 747
[21] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 73
[22] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 75
[23] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 78
[24] Բենեդիկտոս 16-րդ, «Աստված սեր է»

սոցիալական հարցերի ի հայտ գալուն եւ դրանց գլոբալացմանը։

Սոցիալական ուսմունքը, ըստ էության, զարգացել է՝ որպես պատասխան՝ սոցիալական բազում հարցերի, որոնք կուտակվել են հասարակության մեջ եւ տեւական ժամանակ լուծում չեն ստանում՝ հավատքի պակասի, բարոյական արժեքների կորստյան, հարաբերապաշտության, անհատապաշտության, մարդկային էգոիզմի եւ շատ այլ հիմնարար պատճառներով։

Նպատակները

Եկեղեցու սոցիալական ուսմունքի նպատակները կրոնական եւ բարոյական են. կրոնական՝ որովհետեւ ավետարանացման եւ փրկարար առաքելությունն ուղղված է մարդուն՝ իր գոյության ամբողջական իրականությամբ հանդերձ եւ բարոյական՝ որովհետեւ Եկեղեցին ձգտում է «համապարփակ մարդասիրության[25]», այսինքն՝ ազատագրման այն ամենից, ինչ ճնշում է մարդուն եւ դեպի «մարդու եւ ամբողջ մարդկության համապարփակ զարգացումը»[26]։

Տեսլականը

«Սոցիալական ուսմունքը մատնանշում է ճանապարհները՝ դեպի մի հասարակություն, որը հաշտեցված եւ ներդաշնակ է արդարության եւ սիրո մեջ, որը պատմության մեջ կդառնա կանխատեսում, նախամեկնարկ եւ նախապատկեր՝ «նոր երկնքի եւ նոր երկրի, որոնց վրա բնակվում է ճշմարտությունը», Բ Պետ. 3, 13»[27]։

Ո՞վ է հասցեատերը

Եկեղեցու սոցիալական ուսմունքի առաջին հասցեատերը հավատացյալների համայնքն է, որովհետեւ յուրաքանչյուր հավատացյալ ունի սոցիալական պատասխանատվություն։

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է այս ուսմունքի օգնությամբ գիտակցի, որ ունի պատասխանատվություն այլ մարդկանց առջեւ՝ սիրո, արդարության եւ համընդհանուր բարիքի սրեղծման մեջ իր ներդրումն ունենալու։ Եկեղեցին նաեւ այս ուսմունքի միջոցով կոչ է անում հատկապես աշխարհական հավատացյալներին (ոչ հոգեւորականներին եւ վանականներին)՝ ճիշտ կատարելու իրենց աշխարհական պարտականությունները, այսինքն՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ կրթական։

Բայց հաշվի առնելով փրկության լուրի համընդհանուր հասցեականությունը եւ համապարփակ մարդասիրության տեսլականը՝ սոցիալական ուսմունքը ուղղված է «բարի կամքի տեր» բոլոր մարդկանց՝ անկախ դավանանքից, կրոնից, ծագումից եւ մշակույթից, որովհետեւ բոլորն են ընդգրկված հասարակական հարաբերություններում եւ յուրաքանչյուրի վարքը ազդեցություն ունի խաղաղության, արդարության կառուցման համընդհանուր ջանքերի մեջ։

Մնայունը եւ զարգացողը՝ սոցիալական ուսմունքի մեջ

Սոցիալական ուսմունքի ունի երկու բաղադրիչ՝ մնայուն եւ զարգացող կամ ձեւափոխվող մասեր։

Մնայունը այն կորիզն է, որ անքակտելիորեն կապված է Քրիստոսից ավանդված հոգեւոր ժառանգությանը՝ Ավետարանին եւ Եկեղեցու Ավանդությանը եւ հավատքին։ Այս կորիզն իր մեջ կրում է բարոյական հիմնական արժեքները, սկզբունքները, նպատակները, տեսլականը. այս ամենը ենթակա չեն ձեւափոխման։

Զարգացող կամ ձեւափոխվող մասը կապված է աշխարհի փոփոխվող իրականությունների, խնդիրների հետ, դրանց համապատասխան, ժամանակակից ձեւով արձագանքելու եւ հստակ պատասխաններ տալու անհրաժեշտության հետ՝ դարձյալ հիմնվելով ուսմունքի անփոփոխ մասի վրա. «**Հավատքն է նորացման եւ ստեղծարարության խմորիչը**»[28]։

«Եկեղեցին՝ Մայրը եւ Ուսուցչուհին, չի արգելափակվում եւ չի թաքնվում ինքն իր մեջ. նա միշտ բաց է, ուղղված է մարդուն, չէ՞ որ իր գոյության պատճառը այն է, որ մարդը նախատեսված է փրկության համար։ Մարդկանց մեջ Եկեղեցին Բարի Հովվի կենդանի սրբապատերն է, Ով դուրս է գալիս՝ փնտրելու մարդուն եւ գտնում է նրան այնտեղ, ուր նա ապրում է՝ կյանքի իրական (existential) եւ պատմական պայմաններում։ Եկեղեցին դուրս է գալիս մարդուն ընդառաջ՝ Ավետարանով, ազատագրման եւ հաշտության, ճշմարտության եւ խաղաղության ավետիսով»[29]։

Տ. Հովսեփ

[25] Սբ. Պողոս 6-րդ, չրջ. նամակ «Ժողովուրդների զարգացումը», 42
[26] Նույն տեղում
[27] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 82
[28] Կաթողիկէ Եկեղեցու սոց. ուսմունքի ամփոփ, 86
[29] Նույն տեղում

Հոգեւոր իրադարձություններ

«Փոքրիկ իշխան» կենտրոնի սաների Սուրբ Ծննդյան բեմադրությունը

«Հիսուս Քրիստոսի ծննդյան պատկերումը ինքնին հանդիսանում է Աստծո Որդու Մարդեղության խորհրդի պարզ եւ բերկրալից հռչակումը։ Իսկապես, Սուրբ Ծննդյան մսուրը, կարծես, Սուրբ Գրքի էջերից դուրս եկած կենդանի Ավետարան լինի»։

այս տողերը Ն. Ս. Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի «Հրաշալի նշանը» վերտառությամբ ուղերձից են՝ Սուրբ Ծննդյան մսուրի պատկերի մասին։ Քահանայապետը կոչ է անում վերարժեւորել մսուրի նշանակությունը, խորհուրդը, եւ մսուրի պատկերներ պատրաստել մեր տներում, աշխատավայրերում, հրապարակներում, ամենուրեք, ուր կա հնարավորություն։

Քահանայապետի այս ուղերձը մեզ ոգեւորում է առավել մեծ ուշադրություն դարձնել Սուրբ Ծննդյան ավետարանական պատումին եւ ոչ միայն տեղադրել պատկերներ, այլեւ կենդանացնել, վերապրել այդ սրբազան պատումը՝ մեր տներում, կենտրոններում, ամեն տեղ, որտեղ ունենք դեթ չնչին մի հնարավորություն։

Այս մտածումով այս տարի որոշեցինք Սուրբ Ծննդյան պատումի բեմադրություններ կազմակերպել կամ աջակցել դրանց առավել հարուստ կազմակերպմանը նաեւ Հայկական Կարիտասի մի քանի կենտրոններում։

Առաջին բեմադրությունը տեղի ունեցավ 2019թ. դեկտեմբերի 17-ին, Գյումրիի «Փոքրիկ իշխան» սոցիալական կենտրոնում՝ սաների բեմադրությամբ եւ աշխատակիցների օգնությամբ, հատկապես, կենտրոնի համակարգող Աննա Մարտիրոսյանի, երգեցողության ուսուցչուհի Հասմիկ Ջերքեզյանի, որ սովորեցրեց երգերը եւ օգնեց կազմակերպչական աշխատանքում, կարի ուսուցչուհի Սվետա Մկրտչյանի, որ սիրով կարեց բեմական հագուստները, նկարչության ուսուցիչ Վարդան Տիրատուրյանի, որ ստեղծեց գեղեցիկ դեկորացիաները՝ քարայրի տեսարանը, մսուրը, կենդանիները, կամավորական երիտասարդները եւ ուրիշներ։ Այս մեծ աշխատանքի համար նրանց հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը։

Բայց ամենամեծ երախտագիտությունը պետք է հայտնել կենտրոնի պատանիներին, պարմանուհիներին եւ երիտասարդներին, ովքեր մեծ ջանքեր գործադրեցին՝ լավագույն կերպով ներկայացնելու ավետարանական պատումի հիման վրա մեր պատրաստած սցենարը։ Ինչպես պատմողն իր խոսքում ասաց. «Սիրելի՛ ծնողներ եւ ներկաներ, սա մեր առաջին բեմադրությունն է, որ ջանացինք ներկայացնել մեր համեստ ուժերով, բայց շատ լայն եւ ջերմ սրտերով։ Մենք դերասաններ չենք, բայց ուզեցինք ձեզ ցույց տալ, թե ինչքա՛ն ենք սիրում Հիսուսին եւ Սուրբ Ավետարանը»։

Նրանք իրո՛ք ցույց տվեցին իրենց սերը, իրենց մեծ բերկրանքը՝ առ այն, որ կարողանում են ներկայացնել Սրբուհի Մարիամին, Սուրբ Հովսեփին, հովիվներին, մոգերին, ինը հրեշտակների՝ Գաբրիել հրեշտակապետի գլխավորությամբ. ա՛յս էր իրենց առաքելությունը եւ ոչ թե՝ արհեստավարժ դերասական մի խաղ ցույց տալը։ «Աստվածամոր, Սուրբ Հովսեփի կամ հովիվների դերերը խաղալը մեզ համար մեծ ուրախություն է, որովհետեւ նրանք սրբեր են, ում յուրաքանչյուրս կոչված ենք նմանվելու։ Նրանք մեզ նման մարդիկ էին, որ ապրում էին աղքատ, դժվար պայմաններում, իրենց երեսի քրտինքով վաստակում էին իրենց օրվա հացը, բայց այնքա՛ն հավատք ունեին, որ լսեցին Աստծո ձայնը եւ համաձայնվեցին կատարել Աստծո կամքը, իրենց սրտերը լայն բացեցին Աստծո սիրո առջեւ։ Նրանց դերերը տանելով՝ մենք մի քայլ առաջ ենք անում դեպի սրբություն». ասացին պատանիները։

Վերջում, որպես ավետարանական պատումին ավելացված գեղարվեստական մաս, հրեշտակները խոսքեր ուղղեցին հանդիսատեսին։ Ահա՛ մի հատված.

«Մենք՝ պատանիներս ու երիտասարդներս, մեր սրտերում անսահման մեծ եռանդ ունենք, մեծ ու անսահման՝ այնքան, որքան մեր երազանքներն են։ Հիսուս Մանուկը՝ պարզ մսուրի մեջ դրված, մեզ ներշնչում է մի վստահություն, որ մենք կարո՛ղ ենք մեր ապագան կառուցել՝ մեր երազանքների համաձայն եւ Աստծո կամքի համաձայն»։

Իսկ մյուս հրեշտակն ուզեց այդ խանդավառությամբ ոգեւորել նաեւ ծնողներին եւ մյուս մեծահասակներին՝ ասելով.

«Դուք էլ երբե՛ք-երբե՛ք մի հուսահատվեք, սիրելի՛ ծնողներ եւ բոլոր մեծահասակներ։

Մեզ նայելով՝ հիշե՛ք, որ մենք միշտ ձեր կողքին ենք մեր անսպառ եռանդով, մեր ժպիտով, մեր օգնությամբ, մեր մեծ վստահությամբ եւ հավատքով եւ ձեզ խնդրում ենք, որ դու՛ք էլ հավատաք եւ վստահեք, որ դուք էլ ձեր սրտերում ունենաք երազանքներ՝ մեզ նման, որ դուք էլ հիշեք ձեր երիտասարդությունը»։

Նրանց ոգեւորելը մեր յուրաքանչյուրիս պարտականությունն է, մեր ներկայությունը իրենց կյանքում, այսպիսի ստեղծագործական ինքնադրսեւորումների պահերին մի կարեւոր աջակցություն եւ զորակցություն է նրանց համար. այս մասին իմ շնորհակալական խոսքում ասացի մեր սիրելի ծնողներին եւ հյուրերին, որ սիրով ընդառաջել էին մեր հրավերին՝ Հ. Գառնիկ Ծ. Վրդ. Հովսեփյանին, Հ. Ներսես Վրդ. Գալստյանին, Հ. Եղիա Վրդ. Դերձակյանին, Տ. Նարեկ Քհն. Թադեւոսյանին, Անարատ Հղության հայ միաբան քույրեր Քրիստինեին ու Քրիստինեին, Շիրակի մարզպետարանի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ղեկավար Լիլիթ Գորգինյանին եւ Հայկական Կարիտասի այլ ծրագրերի աշխատակիցներին։ Հիշեցրեցի Սրբուհի Մայր Թերեզայի հայտնի խոսքերը, թե «պետք է ձգտել անել ոչ թե մեծ գործեր, այլ՝ փոքր գործեր՝ մեծ սիրով»։ Ա՛յս էր երիտասարդների հետ մեր միասնական ջանքերի ամբողջ իմաստը՝ որպես պատասխան՝ յուրաքանչյուրիս հանդեպ Աստծո առատազեղ սիրույն, որի խտացումն է նորածին Հիսուս Մանուկը կամ մարդեղացած Աստծո Որդին։

Տ. Հովսեփ

«Էմիլի Արեգակ» կենտրոնի սաների Սուրբ Ծննդյան բեմադրությունը

«Հաշմանդամություն ունեցող անձանց մեջ է՛լ ավելի մեծ ուժգնությամբ է բացահայտվում մարդու արժանապատվությունն ու մեծությունը». Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքի ամփոփ, 148։

2019թ. դեկտեմբերի 20-ին Հայկական Կարիտասի «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամությամբ անձանց խնամքի կենտրոնում մենք նորովի ականատեսը եղանք վերոհիշյալ տողերի ճշմարտացիությանը, երբ միասին բեմադրեցինք Սուրբ Ծննդյան տեսարանը՝ կենտրոնի տաղանդավոր սաների մասնակցությամբ։ Տեսարանը արժանի էր մեր հոգնությունների, վազքին, աղոթքների եւ երազանքների. երեխաներն արեցին իրենց լավագո՛ւյնը, ինչին եւ միասին ուզում էինք հասնել. նրանք հաղթահարեցին մեծ դժվարություններ՝ սովորելով երկար տեքստեր ընթերցել, անգիր անել, ապրել դրանց իմաստը, վերարտադրել՝ մեզ զգացմունքայնությամբ, ամբողջ էությամբ, ի սրտե զգալով եւ ձգտելով փոխանցել այդ ամենը դահլիճում ներկաներից յուրաքանչյուրին։

Պատմողը՝ Շողիկը, նույնիսկ մի քանի գործողություն էր կատարում՝ ընթերցում էր, վազում էր դերակատարների մոտ եւ պահում էր խոսափողը, երբեմն նաեւ չչուկով հուշում էր բառերը ընկերներին, որոնք հուզված էին իրենից ավելի, ապա վազում էր եւ երգչախմբին էր մոտեցնում խոսափողը, որպեսզի ամեն մի նոտա լինի հնչեղ, որովհետեւ ամեն մի նոտայի եւ բառի մեջ թաքնված է ժամերի ջանադրություն եւ կյանք, հույսերի եւ երազանքների անզուգական պահեր։

Մարիամը՝ Դիաննան, ձեռքերի շարժումները իմաստալից կերպով զուգակցում էր խոսքին եւ ասում. «Իմ անձը կմեծարի՝ Տիրոջը...որովհետեւ Նա մեծամեծ գործեր արեց ինձ համար»։ Իրոք, Աստծո մեծագործություն էր այս երեխաներին այսպիսին տեսնելը։

Հրեշտակները՝ Կատրինը, Նարեն, Թերեզան պարում էին անվասայլակներով, կամավորականների օգնությամբ, մեծ ցնծությամբ թեւածումների յուրօրինակ շարժումներով։

Գաբրիելը՝ Էդուարդը, հրճվում էր ավետման հուզիչ պատասխանատվությամբ։

Մսուրի տեսարանը...Մարիամը մեծ քնքշանքով խանձարուրի մեջ էր փաթաթում

Հիսուս Մանկանը եւ գրգանքով շոյում իր գրկում՝ Հովսեփի՝ Արթուրի հետ միասին։

Հովիվները՝ Դանիելը, Նարեկը, Ֆելիքսը փառք էին տալիս Տիրոջը՝ յուրօրինակ մոտեցումներով։

Մոգերը՝ Կարենը, Արտյոմը, Վանիկը, Արմենը, երկար ճանապարհ անցան Արեւելքի աստղի՝ Մարտինի առաջնորդությամբ եւ «Թմբկահարի երգի» հնչյունների ներքո, որ թմբուկով նվագում էր Միքայելը։

Այս բոլոր անունները հաճելի է հիշելը, որովհետեւ նրանք գրված են Հիսուս Մանկան Սրտում եւ, գրված են վաղուց. տարիներ շարունակ Էմիլի Արեգակում Սուրբ Ծննդյան բեմադրություններ եղել են երաժշտաթերապեւտ Գոհար Շախուլյանի եւ անձնակազմի ջանքերի շնորհիվ, իսկ այս տարի ջանացինք ավելի հարուստ սցենարով եւ գործողություններով բեմադրել։

Անշուշտ, երախտագիտությանս առաջին բառերն ուղղված էին երեխաներին, որ իրենց հավատքով եւ հույսով այնքա՛ն ջերմացրեցին բոլորի սրտերը, ապա շնորհակալություն հայտնեցի տկն. Գոհարին՝ կազմակերպական աշխատանքում միշտ աջակցելու համար, կենտրոնի տնօրինությանը՝ Տիգրանուհի Հակոբյանին եւ տկն. Թամարային՝ բեմադրության բոլոր հնարավորությունները ստեղծելու համար, կամավորականներին, արտթերապիայի մասնագետ Մարիամին, որ պատրաստեց քարայրի տեսարանը, ծնողներին, որ զորակցում են իրենց զավակներին իրենց ներկայությամբ եւ մեծացնում նրանց դժվարին պայմաններում, ի վերջո, հյուրերին, հատկապես, Շիրակի մարզպետ Տիգրան Պետրոսյանին, որ կենտրոնի սաների կողքին է եղել կենտրոնի հիմնադրման օրերից ի վեր՝ որպես Կարիտասի նախկին աշխատակից, քաղաքապետարանի ներկայացուցիչներին։ Բեմադրությունն ավարտին հրեշտակներից մեկը՝ Կատրինը, շատ ազդեցիկ տոնայնությամբ ասաց հետեւյալը.

«Աստված շատ սիրում է բոլորիս եւ խնդրում է, որպեսզի մենք հասկանանք դա եւ մենք էլ սիրենք Իր Հիսուսին, սիրենք միմյանց եւ մեր կյանքը, որ Աստված մեզ տվել է որպես մի թանկարժեք նվեր։ Աստծո օգնությամբ մենք ամե՛ն ինչ կարող ենք...»

Տ. Հովսեփ

Տատիկներն ու պապիկներն առաջին անգամ բեմադրեցին Սուրբ Ծննդյան տեսարանը

«Այն հասարակությունը, որը չի արժեւորում տատիկներին եւ պապիկներին, ապագա չունի։ Նոր սերնդի համար տարեցները փորձառության եւ իմաստության գանձարան են։ Այն հասարակությունը, որը հաշվի չի առնում սերունդների միջեւ համաձայնությունը, ի վերջո կկորցնի այն, ինչն իսկապես կարեւոր է՝ սերը»։

Այս խոսքերը Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետն ասաց 2018թ. օգոստոսի 28-ին, Դուբլինում, ընտանիքների հետ ընդհանուր մի հանդիպման ժամանակ։ Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ուսմունքում տարեցների հանդեպ հոգատարությունը միշտ կարեւոր տեղ է զբաղեցնում, քանի որ կյանքի իրավունքի պաշտպանության մի մաս է՝ կյանքի իրավունքը՝ մարդ անհատի հղացման առաջին վայրկյանից մինչեւ մահը։ Այս տեսլականով է աշխատում նաեւ Հայկական Կարիտասը՝ տարեցներին ուղղված իր սոցիալական ծրագրերում՝ ջանալով Աստծո սիրո ներգործությունը առավել զգալի դարձնել հատկապես միայնակ, հիվանդություններից տառապող կամ սոցիալական վատ պայմաններում ապրող տարեցների կյանքում։

Որպես տարեցների ցերեկային խնամքի կենտրոնում մեր սիրելի տատիկների եւ պապիկների հետ հոգեւոր աշխատանքի մի կարեւոր եւ գեղեցիկ հանգրվան, դեկտեմբերի 20-ին նրանց հետ միասին առաջին անգամ բեմադրեցինք Սուրբ Ծննդյան ավետարական պատմությունը։ Համոզվեցի, որ մեկ ամսից ավելի տեւած մեր միասնական ջանադրությունը, ինչպես նաեւ երկարատեւ հոգեւոր զրույցները, միասնական աղոթքները ի զուր չէին։ Առաջացած տարիքի հետեւանքները, ֆիզիկական թուլությունը, տարիների բեռը, ընտանեկան, հոգեբանական, սոցիալական խնդիրները չկարողացան խոչընդոտել անկեղծ խոսքերի, ժպիտների,

հրեշտակների պարային պարզ շարժումների, ի վերջո, հավատքից բխած գործողությունների ազատ արտահայտման համար, որոնք այնքա՛ն գեղեցիկ եւ այնքա՛ն տպավորիչ էին, որ նույնիսկ իրենց՝ տարեցների համար անակնկալ էր։ Անակնկալ էր, քանի որ ի սկզբանե, իրե՛նք էլ լուրջ չէին ընդունում բեմադրություն անելու իմ առաջարկը։ Կույս Մարիամի, Մանուկ Հիսուսի ծնունդի մասին հրեշտակի ավետիսը, Սուրբ Հովսեփի, հրեշտակների կերպարները իրենց առաջացած տարիքում ներկայացնելու միտքը շատերի համար անհասկանալի էր եւ ծիծաղ էր առաջացնում, երբեմն հիասթափեցնում էին նաեւ տարեկից որոշ ընկերների անտարբեր կամ քննադատական հայացքները, խոսքերը, որոնք սակայն, ի վերջո, տեսնելով ընկերների հաջողությունները, վերածվեցին անկեղծ դրվատանքի խոսքերի եւ ծափահարությունների։ Ինձ համար մե՛ծ հաճույք էր ուղեկցել յուրաքանչյուր դերակատարի՝ ստեղծագործական առաջին քայլերը կատարելիս, հիշեցնել խոսքերը, պարային շարժումներ անել իրենց հետ միասին եւ, ի վերջո, հանդիսատեսի առջեւ շնորհակալություն հայտնել բոլորին։

Անշուշտ, երախտագիտություն հայտնեցի նաեւ կենտրոնի անձնակազմին, հատկապես, սոցիալական աշխատող Գուրգեն Բաղդասարյանին, որ տարիներ շարունակ կիսել է կենտրոն հաճախող տատիկ պապիկների դժվարություններն ու ուրախությունները, տկն. Ֆլորային եւ Արմեն Մարտիրոսյանին, որ ղեկավարում են տարեցների խնամքի ծրագրերը, կամավորականներին՝ Մարգարիտին, Հայկուշին, հատկապես, Վալերիային, որ Եղիսաբեթի դերակատար տկն. Սիլվայի հետ միասին պատրաստեց բեմական հագուստները, Հայկական Կարիտասի տնօրեն Գագիկ Տարասյանին եւ ծրագրերի ղեկավար Անահիտ Գեւորգյանին, որ իրենց ներկայությամբ քաջալերեցին եւ սիրով լի ուշադրություն ցուցաբերեցին իրենց սիրելի շահառուների նկատմամբ՝ իրենց համար բացահայտելով նրանց տաղանդները, երիտասարդական ավյունը, որ չեն կարող սքողել տարիների թողած կնճիռները եւ որ հուշում է մի միտք՝ այն, որ շահառուների համար հարկավոր է միշտ ավելին անել։ Այս օրը առիթ էր նաեւ միասնության, վատ սովորությունները մոռանալու, միմյանց հանդեպ ավելի ջերմ եւ հանդուրժող լինելու՝ Սուրբ Ծննդյան տեսարանի խորհրդի հետ համահունչ։

Բեմադրությունն ավարտվեց պատմողի հուզված խոսքերով.

«Աշխարհում կան հազարավո՛ր մարդիկ՝ տարեցներ, հիվանդներ կամ միայնակ, լքված, մոռացված բոլորից, ովքեր կորցրել են ամեն ինչ եւ բոլորին։ Բայց Հիսուս չի՛ մոռանում ոչ մեկին՝ անկախ այն բանից, թե ովքեր են նրանք, ինչպիսի անցյալ են ունեցել, մեղավոր են, թե արդար, Հիսուսը սիրում է բոլորի՛ս...

Աստծո օգնությամբ մենք կարող ենք մեր կյանքը ապրել սրբությամբ եւ վերջում Աստծուն հանդիպել մեծ կարոտով եւ վստահությամբ, որ Աստված մեզ կարժանացնի լավագույն վիճակին»։

Վերջում ներկաներին ցույց տվեցի նաեւ հրեշտակներից մեկի՝ տկն. Էմմայի պատրաստած գոբելենը՝ Սուրբ Ծննդյան պատկերով, որ հեղինակը մեկ ամիս շարունակ ամեն օր խոստանում էր բերել եւ ցույց տալ բոլորին եւ ամեն անգամ մոռանում էր բերել։ Այսօր բերել էր եւ իր համար իսկական տոն էր. միակ զավակին կորցրած միայնակ այդ կնոջն, ի վերջո, ես տեսա անկաշկանդ եւ լայն ժպտալով։

Տ. Հովսեփ

Սուրբ Հաղորդության երկրպագություն՝ Հայկական Կարիտասի աշխատակիցների համար

Ի նկատի ունենալով աղոթական կյանքի կարեւորությունը Հայկական Կարիտասի առաքելության մեջ՝ 2020թ. հունվարից սկսեցինք միասնական աղոթական մի նոր ձեռնարկ, որ, վստահ ենք, Սուրբ Հոգու ներգործությամբ, տալու է ցանկալի հոգեւոր պտուղները։ Հայկական Կարիտասի Գյումրիի

կենտրոնների աշխատակիցների համար կազմակերպեցինք Սուրբ Հաղորդության երկրպագություն՝ Գյումրիի Սրբոց Նահատակաց հայ կաթողիկէ մայր տաճարում։ Երկրորդ միասնական երկրպագությունը տեղի ունեցավ փետրվարի 6-ին։

Երկրպագությունից առաջ Կարիտասի աշխատակիցներին ողջույնի խոսքով դիմեց Գյումրիի հայ կաթողիկէների հոգեւոր հովիվ Արժ. Տ. Գրիգոր Ավ. Քհն. Մկրտչյանը։ Նրա խոսքի հիմնական շեշտադրությունը Տեր Հիսուս Քրիստոսին ճանաչելու անհրաժեշտությունն էր, որ պետք է լինի հիմք՝ Սուրբ Հաղորդության վսեմ խորհուրդը հասկանալու եւ սիրելու համար։ Առանց Քրիստոսի հետ մտերիմ աղոթական հարաբերության, առանց աստվածճանաչողության, հնարավոր չէ երկրպագել Հիսուսի Մարմինը, հասկանալ Սուրբ Պատարագը եւ Պատարագին մասնակցելու կարեւորությունը, շեշտեց Տ. Գրիգորը եւ Կարիտասի աշխատակիցներին խնդրեց իրենց աշխատանքային հույժ կարեւոր եռուզեռի մեջ նաեւ ժամանակ գտնել Քրիստոսի մասին խորհրդածելու համար։ Քրիստոսի հետ մտերմությունը, նրան ճանաչելու ցանկությունը հիմնական գրավականն է՝ քրիստոնյայի հոգեւոր աճման եւ, մանավանդ, Հայկական Կարիտասի առաքելության կատարման համար։ Հարկավոր է Քրիստոսին մոտենալ սեփակա՛ն նախաձեռնությամբ, ազատորե՛ն, որպես աստվածային կոչում, բացատրեց նա եւ իր ուրախությունը հայտնեց՝ Կարիտասի աշխատակիցներին միասնաբար աղոթքի մասնակցելու այս գեղեցիկ առիթի համար։

«Հացս այս Մարմին» շարականով սկսեցինք Սուրբ Հաղորդության երկրպագությունը, աղոթեցինք գեղեցիկ, պարզ լեզվով գրված աղոթքներ, որոնց ընթացքում նաեւ դարձյալ փոքրիկ բացատրություններ տվեցի, թե ինչ է նշանակում Սուրբ Հաղորդությունը, ինչի համար ենք կատարում երկրպագությունը եւ թե ինչ նպատակ ունի այն կազմակերպել Հայկական Կարիտասի համար։ Նպատակը շատ հստակ է՝ Կարիտասի աշխատակիցների համար ստեղծել հնարավորություն՝ միասնական աղոթքի, Տեր Հիսուս Քրիստոսի Զոհաբերությունը, Սուրբ Հաղորդությունը հասկանալու եւ սիրելու համար, որն իր հերթին հիմքեր կստեղծի՝ առավել լավ հասկանալու եւ սիրելու Սուրբ Պատարագը։ Եվ, ի վերջո, աղոթքը լրո՛ւմն է այն աշխատանքի, որ մշտապես կատարում ենք կենտրոններում՝ աշխատակիցների եւ շահառուների հոգեւոր առաջխաղացման համար եւ որը պետք է կատարենք՝ մշտապես նոր, արդյունավետ ճանապարհներ որոնելով։

Ես հավատում եմ, որ սա ճիշտ ճանապարհ է, քանի որ իրական դրական փոփոխություններ բերողը ոչ թե մենք ենք, այլ՝ Աստված Ինքը՝ մեր միջոցով։ Ներկայի եւ ապագայի հանդեպ ինձ վստահություն են ներշնչում նաեւ այն հոգեւոր պտուղները, որ անվիճելիորեն տեսանելի են Հայկական Կարիտասի աշխատակիցների մեջ եւ օրեցօր զարգանում են իրե՛նց իսկ ջանքերով, որ չեն զլանում գործադրել՝ իրենց կատարած մեծ աշխատանքին զուգահեռ։ Այս ամենի համար հարկ է փառք տալ Աստծուն ամեն վայրկյան։

Մեծ ուրախություն էր, որ ներկա էր նաեւ լիբանանահայ Տկն. Զվարթ Նաջարյանը, որ հեռավոր 1995-ին եղավ առաջին նախաձեռնողը Հայկական Կարիտասի ստեղծման՝ Արհ. Տ. Ներսես Արքեպս. Տեր-Ներսեսյանի առաջնորդական հովանու ներքո, աղոթքով եւ տքնաջան աշխատանքով։

Սուրբ Հաղորդության երկրպագությունն ավարտեցինք՝ միասնաբար աղոթելով Հայկական Կարիտասի առաքելության համար։ Այս կարեւոր աղոթքը մտադիր ենք կատարել յուրաքանչյուր ամսվա առաջին հինգշաբթի օրը՝ ամեն անգամ տարբեր դիտավորություններով։

Աղոթք՝ Սուրբ Հաղորդության առջեւ՝ Հայկական Կարիտասի առաքելության համար

Տեր Հիսուս, ահա՛ եկել ենք Քո Սուրբ Հաղորդության առջեւ՝ արտահայտելու մեր սերը՝ Քո նկատմամբ, սեր, որը մեր կազմակերպության անվանումն է եւ որը հրավիրված ենք ապրելու եւ գործադրելու մեր առաքելության եւ աշխատանքի մեջ։

Օգնի՛ր մեզ, Տե՛ր, առավել խորությամբ ըմբռնել այդ սիրո ամբողջ տարողությունը, իմաստը եւ հեռանկարը։

Օգնի՛ր մեզ, Տե՛ր, միշտ գիտակցել, որ այդ սիրո աղբյուրը Դու ես, առաջին ուսուցիչը Դու ես, որ Քո կյանքով եւ Խաչի վրա կատարած զոհաբերությամբ սովորեցրիր մեզ, թե ինչ է նշանակում սիրել Աստծուն եւ սիրել միմյանց։

Օգնի՛ր, Տե՛ր, Քեզանից սովորել, թե ինչպե՛ս պետք է սիրել աղքատներին, արհամարհվածներին, կյանքի դժվարին պայմաններում ապրող մեր եղբայրներին ու քույրերին, տարեցներին եւ մանուկներին, բոլոր նրանց, ովքեր մեր ուշադրության կարիքն ունեն, մեր ընկերակցության եւ ուղեկցության կարոտն ունեն։

Օգնի՛ր, Տե՛ր, լինել մարդ արարածի նկատմամբ Քո աստվածային սերը փոխանցող

ջերմ սրտեր, Քո աստվածային զորությունն ու մխիթարությունը փոխանցող ձեռքեր, Քո ներկայությունը առօրյա կյանքի դժվարությունների մեջ նկատելու կենդանի հրավերներ եւ ճշմարտացի նշաններ։

Օգնի՛ր, Տե՛ր, մշտապես գիտակցել Հայկական Կարիտասի առաքելության աստվածային արմատները, գործունեության ավետարանական հիմքերը, Քո Սուրբ Եկեղեցու փրկարար առաքելությունը կիսելու կոչումը եւ բերկրա՛նք ապրել, հպարտանա՛լ այդ փաստով։

Օգնի՛ր, Տե՛ր, երբեք չմաչել վկայելու մեր առաքելության հոգեւոր ինքնությունը՝ հետեւելով Քո օրինակին եւ մեր հազարաւոր եղբայրների եւ քույրերի օրինակին, որ այսօր աշխարհի տարբեր ծայրերում զոհում են իրենց կյանքը՝ վկայելով իրենց սերն ու հավատարմությունը Քո նկատմամբ։
Օգնի՛ր, Տե՛ր, որպեսզի մշտապես աճենք Քո նկատմամբ մեր սիրո, Քո կամքի եւ Խոսքի ճանաչողության մեջ, Քո Սուրբ Հաղորդության եւ Սուրբ Պատարագի հանդեպ ջերմեռանդ սիրո եւ աղոթասիրության մեջ՝ զուգահեռ մեր մասնագիտական եւ աշխատանքային աճին։

Օգնի՛ր, Տեր՛, միշտ գիտակցել, որ առանց հոգեւոր աճի, անհնար է արձանագրել երկարաժամկետ եւ ազդեցիկ աշխատանքային արդյունքներ, գիտակցել, որ Կարիտասում յուրաքանչյուր աշխատանքային հաջողության արժեքը Քո առաջ որոշվում է մեր հոգեւոր ջանքերի հաջողությամբ։

Վերջապես, Տե՛ր, օգնի՛ր, որ կարողանանք գնահատել եւ սիրել մեզ Քո կողմից շնորհված պարգեւները՝ միասնականության, աղոթքի, հոգեւոր ապրումի փոքրիկ առիթները, մեր կարիքավոր եղբայրների եւ քույրերի երկար սպասված ժպիտները, նրանց փոքրիկ հաջողությունները, հաղթանակները եւ շնորհակալություն հայտնենք Քեզ՝ այդ ամենի համար։

Սովորեցրու՛ մեզ առանց վարանելու հավատալ, որ Դու ճշմարտապե՛ս ներկա ես Սուրբ Հաղորդության մեջ՝ հացի նշխարի տեսքով, որ Դու իրո՛ք այդ փոքրիկ կտորի մեջ ես եւ նայում ես յուրաքանչյուրիս՝ Քո քնքուշ, ամեն ինչ հասկացող եւ ներող, բայց կարոտած աստվածային հայացքով. Ամեն։

Տ. Հովսեփ
6 փետրվարի, 2020

Ն. Ս. Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետի 2020թ. Մեծ Պահքի ուղերձը

«Աղաչում ենք հանուն Քրիստոսի,
որ հաշտվե՛ք Աստծո հետ»
(Բ Կոր. 5, 20)

Սիրելի եղբայրնե՛ր եւ քույրե՛ր,
այս տարի եւս Աստված մեզ բարենպաստ ժամանակ է պարգեւում, որպեսզի մենք մաքրված, նորոգված սրտով կարողանանք պատրաստվել տոնին՝ Հիսուս Քրիստոսի մահվան ու Հարության մեծ խորհրդին, որն քրիստոնեական անձնական եւ համայնքային կյանքի անկյունաքարն է։ Այս խորհրդին մենք պետք է միշտ վերադառնանք եւ՛ մտովի եւ՛ սրտով։ Իսկապես, այն չի դադարում մեր մեջ աճել այնքանով, որքանով մենք մասնակցում ենք այդ խորհրդի հոգեւոր զարգացմանը եւ ներգրավվում ենք՝ մեր ազատ ու մեծահոգի պատասխանով։

1.Զատկի խորհուրդը՝ դարձի հիմքը

Քրիստոնյայի ուրախությունը սկիզբ է առնում Հիսուսի մահվան ու Հարության կերիգման՝ Բարի լուրը, լսելիս եւ ընդունելիս։ Այն ամփոփում է սիրո խորհուրդը, որն «այնքա՛ն իրական է, այնքա՛ն ճշմարիտ, այնքա՛ն առանձնահատուկ, որ մեզ առաջարկում է անկեղծ եւ արդասաբեր երկխոսությամբ լի հարաբերություններ» (առաքելական հորդորագիր Christus vivit, 117)։ Նա, ով հավատում եւ ընդունում է այս Ավետիսը, մերժում է այն սուտը, ըստ որի մեր կյանքը ծագել է մեզանից, մինչդեռ իրականում կյանքը ծնվել է Հայր Աստծո սիրուց, Նրա՝ առատ կյանք պարգեւելու կամքից (տե՛ս՝ Հվհ. 10, 10)։ Եթե լսենք «ստի հոր» (տե՛ս՝ Հվհ. 8,45) չողոքորթ, կեղծավոր ձայնը, ապա մեզ սպառնում է անհեթեթության անդնդում մխրճվելու վտանգը՝ դժոխքն ապրելով արդեն իսկ երկրի վրա, որի մասին, ցավոք սրտի, վկայում են մարդկային անձնական եւ հավաքական

փորձառության շատ դրամատիկ իրադարձություններ։

Այդ պատճառով 2020թ. այս Մեծ Պահքին ցանկանում եմ յուրաքանչյուր քրիստոնյայի հորդորել այն, ինչի մասին ես արդեն գրել եմ երիտասարդներին՝ Christus vivit առաքելական հորդորագրում. «Նայե՛ք Խաչյալ Հիսուսի տարածված ձեռքերին, թույլ տվե՛ք Նրան նորից ու նորից փրկել ձեզ։ Երբ դուք գնում եք ձեր մեղքերը խոստովանելու, վստահե՛ք Նրա գթությանը, որը ձեզ ազատում է մեղքերից։ Խորհե՛ք Նրա Արյան մասին, որ հեղվեց այնքա՛ն սիրով եւ թույլ տվե՛ք, որ Այն մաքրի ձեզ։ Այդպես դուք կարող եք նորից ու նորից վերածնվել»։ Հիսուսի Զատիկը հեռավոր անցյալի իրադարձություն չէ. Սուրբ Հոգու զորությամբ այն միշտ կենդանի է եւ մեզ թույլ է տալիս հավատքով նայել Քրիստոսի Մարմնին ու դիպչել Նրան՝ բազում տառապյալ մարդկանց մեջ։

2. Դարձի հրատապությունը

Հոգեշահ է՝ խորապես խորհրդածել Զատկի Խորհրդի շուրջ, որի շնորհիվ մեզ է պարգեւված Աստծո ողորմածությունը։ Իսկապես, ողորմության փորձառություն կարելի է ապրել՝ միայն խաչված եւ հարություն առած Տիրոջը «դեմ առ դեմ» հանդիպելով, Ով «սիրեց ինձ ու Ինքն Իրեն մատնեց ինձ համար (Բ Կոր. 5, 21)։ Այստեղ անհրաժեշտ է անկեղծ զրույց, ընկերական երկխոսություն։ Ահա՛ թե ինչու է Մեծ Պահքի ժամանակ այդքան կարեւոր աղոթքը։ Մինչ պարտականություն լինելը, այն, նախ, արտահայտում է Աստծու սիրուն պատասխանելու անհրաժեշտությունը, որը միշտ առաջնորդում եւ աջակցում է մեզ։ Քրիստոնյան աղոթում է՝ հասկանալով, որ նա արժանի չէ այդ սիրուն։ Աղոթքը կարող է տարբեր ձեւակերպումներ ունենալ, սակայն Աստծո աչքերում իրականում կարեւոր է, որ այն խորապես ներթափանցում է մեր էության մեջ, այն աստիճան, որ փչրում է մեր կարծրացած սիրտը, որպեսզի մեր սիրտն առավել շատ դառնա դեպի Աստված ու Նրա կամքը։

Եկե՛ք, ուրեմն, այս բարենպաստ ժամանակում թույլ տանք Աստծուն ուղեկցել մեզ, ինչպես որ ուղեկցեց Իսրայելին անապատում (տե՛ս՝ Օս. 2,16), որպեսզի մենք վերջապես լսենք մեր Փեսայի ձայնը. թող այն առավել բարձր ու խոր հնչի մեր մեջ։ Որքան շատ մենք թույլ տանք Նրա Խոսքին՝ դիպչել մեզ, այնքան հաճախ կզգանք Նրա անաչառ ողորմությունը մեր նկատմամբ։ Այսպիսով, թույլ չտա՛նք, որ այդ բարենպաստ ժամանակն ուղղակի անցնի, թողնե՛նք ինքնավստահ պատրանքները, թե իբր մենք ենք եւ՛ ժամանակի տերը եւ՛ դեպի Աստված դառնալու ճանապարհների տերը։

3. Աստծո խանդավառ ցանկությունը՝ զրուցելու Իր զավակների հետ

Այն հանգամանքը, որ Աստված մեզ նորից դարձի գալու բարենպաստ ժամանակ է պարգեւում, երբեք չպետք է ընկալվի որպես մի բան, որ ինքնին ենթադրելի էր։ Այս նոր հնարավորությունը պետք է առաջացնի երախտագիտության զգացողություն եւ մեզ արթնացնի քնից։ Չնայած չարի դրամատիկ գոյությանը մեր կյանքում, նաեւ Եկեղեցում եւ աշխարհում, մեր ընթացքը փոխելու համար շնորհված այս տարածությունն արտահայտում է Աստծո համառ կամքը՝ չընդհատել փրկարար երկխոսությունը մեզ հետ։ Խաչված Հիսուսով, Ում Աստված «մեզ համար դարձրեց զոհ՝ մեր մեղքերի համար» (Բ Կոր. 5, 21), Տիրոջ այդ կամքը հասավ այն աստիճանին, որ մեր բոլոր մեղքերը բարդվեցին Իր Որդու վրա, ընդհուպ այն աստիճան, որ «Աստված դարձավ Ինքն Իր դեմ», ինչպես ասում էր Բենեդիկտոս XVI Պապը (տե՛ս՝ շրջ. նամակ Deus caritas est, 12)։ Որովհետեւ Աստված սիրում է նաեւ Իր թշնամիներին (տե՛ս՝ Մտթ. 5,43-48)։

Երկխոսությունը, որը Աստված ցանկանում է հաստատել յուրաքանչյուր անձի հետ՝ Իր Որդու Զատկի Խորհրդի միջոցով, այն չէ, ինչը պատմվում է Աթենքի բնակիչների մասին, ովքեր «ոչ մի այլ բանին առավել սիրով ժամանակ չէին տրամադրում, քան՝ ասելով կամ լսելով մի նոր բան» (Գործք 17, 21)։ Ունայն եւ մակերեսային հետաքրքրասիրությամբ թելադրված նման դատարկախոսությունը ընորոշ է ցանկացած դարաշրջանի աշխարհիկ կյանքին, իսկ մեր ժամանակներում այն կարող է նաեւ դրսեւորվել ԶԼՄ-ների սխալ օգտագործմամբ։

4. Հարստություն, որով պետք է կիսվել, այլ ոչ թե կուտակել միայն սեփական անձի համար

Կյանքում կենտրոնական տեղ հատկացնել Զատկի Խորհրդին՝ նշանակում է կարեկցել Խաչյալ Հիսուսի վերքերին, որոնք ներկա են պատերազմների շատ անմեղ զոհերի մեջ, կյանքի նկատմամբ ոտնձգություններում, չծնված երեխաների եւ տարեցների կյանքում, բռնության բազմաթիվ տեսակների մեջ, բնապահպանական աղետներում, բնական ռեսուրսների անհավասարաչափ բաշխման մեջ, մարդավաճառության բոլոր տեսակներում եւ շահույթի անսանձ մոլուցքի մեջ, որը կռապաշտության մի ձեւ է։

Այսօր եւս շատ կարեւոր է հրավիրել բարի կամքի տեր մարդկանց՝ կիսվելու իրենց

բարիքներով կարիքավորների հետ՝ ողորմության միջոցով՝ որպես ավելի արդար աշխարհ կառուցելու անհատական ճանապարհ: Բարեգործությունը մարդկանց դարձնում է առավել մարդկային, իսկ կուտակման դեպքում մարդուն սպառնում է սեփական եսամոլության մեջ պարփակվելու վտանգը: Մենք կարող ենք եւ պե՞տք է առաջ ընթանանք՝ հաշվի առնելով տնտեսության կառուցվածքային կողմերը: Այդ պատճառով էլ 2020թ. Մեծ Պահքին՝ մարտի 26-ից մինչեւ մարտի 28-ը, ես Ասիզի եմ հրավիրել երիտասարդ տնտեսագետների, ձեռներեցների եւ փոփոխություն բերողների, որպեսզի նրանց օգնությամբ ստեղծենք ավելի արդար եւ համափարպակ տնտեսություն: Ինչպես բազմիցս նշվել է Եկեղեցական ուսմունքի մեջ, քաղաքականությունը հանդիսանում է ողորմած սիրո մի բացահայտ դրսեւորում (Պիոս ԺԱ Քահանայապետ, դիմում՝ Իտալական կաթողիկէ համալսարանների դաշնությանը, 1927թ. դեկտեմբերի 18): Սա նաեւ վերաբերում է տնտեսությանը, որը կազմակերպվում է Ավետարանի ոգով՝ «Երանի՛ների» պատվիրանների ոգով:

Ես խնդրում եմ Սուրբ Կույս Մարիամի բարեխոսությունը՝ Մեծ Պահքի համար, որպեսզի մենք ականջ դնենք Աստծո հետ հաշտեցման կոչին, որպեսզի սրտով ընկալենք Զատկի խորհուրդը եւ դիմենք Աստծուն՝ անկեղծ երկխոսության միջոցով: Այդպիսով մենք կդառնանք այն, ինչ Քրիստոս ասում էր Իր աշակերտներին. «երկրի աղը եւ աշխարհի լույսը» (տե՛ս՝ Մտթ. 5,13-14):

Ֆրանցիսկոս
Հռոմ, Սուրբ Հովհաննեսի տաճար Լատերանի բլրին,
2019թ, հոկտեմբերի 7
Միսական տոն Վարդարանի Տիրամոր

Թարգմանեց՝ Նարիա Բաղդասարյանը
Սրբագրեց՝ Տ. Հովսեփ Գալստյանը

Ի՞նչ է Քառասնորդաց Պահքը՝ Կարիտասի համար



«Սատանան Հիսուսին կրկին առավ տարավ մի շատ բարձր լեռ, նրանց ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը եւ ասաց նրան.

«Այս ամենը քե՛զ կտամ, եթե առջեւս ընկնելով երկրպագես ինձ»։ Այդ ժամանակ Հիսուսն ասաց նրան. «Գնա՛, սատանա՛, որովհետեւ գրված է.

«Տիրոջը՝ քո Աստծուն կերկրպագես եւ միայն նրան կպաշտես»»,
Մտթ. 3, 8-10

Մեծ Պահքի օրերը յուրաքանչյուր հավատացյալի համար իր հոգեւոր եւ բարոյական կյանքին անդրադարձ կատարելու, սեփական սխալները գիտակցելու, վերլուծելու եւ սրբագրելու մի հնարավորություն է։ Ավելին, պահեցողությունը նոր հոգեւոր կյանք սկսելու սկիզբ է, սեփական թուլությունները հաղթահարելու, ինքդ քե՛զ հաղթելու, սատանայի՛ն հաղթելու սկիզբ է։ Սա վերաբերում է թե՛ անհատական եւ թե՛ հավաքական կյանքին. **քրիստոնեությունը երբեք չի կարող լինել միայն անձնական հարց, չի կարող մեկուսացվել** միայն սեփական անձի ներսում եւ փակ լինել ուրիշների համար։ Խոսքը չի վերաբերում մեղքերի խոստովանությանը եւ սեփական սխալները, թուլությունները ուրիշների առջեւ անպայմանորեն բացելուն, այլ խոսքը վերաբերում է սեփական հոգեւոր ներաշխարհի փորձառությունները, հարստությունները, նույնիսկ, եթե կուզեք, ձախողումները, անկումների ու վերելքների հաջորդականությունը ուրիշների հետ **կիսելու** առաքելությանը, որ ունի յուրաքանչյուր անձ, ով ինքն իրեն հռչակում է «Քրիստոսի աշակերտ»։ Զմեկուսանալ անձնական տիրույթում՝ նաեւ նշանակում է վստահել ուրիշներին, համառորեն փնտրել եւ ուրիշների մեջ գտնել լավը՝ մոռանալով չարը, որ կա բոլորի՛ս մեջ, ներել՝ զրոյական մեկնակետից նոր հարաբերություններ զարգացնելու պատրաստակամությամբ. «**Լայնորեն բացե՛ք ձեր սրտերը**», Բ Կոր. 6,

13։ Քրիստոնեությունը՝ ինքներս մեզ ճիշտ ճանապարհով սոցիալիզացնելու եզակի հարթակ է, գործիքակազմ է, մեթոդների, սկզբունքների ամբողջություն է, որին մենք ընդհանուր անունով կարող ենք ասել «Ավետարան», կամ փրկության, ազատագրության Բարի Լուրը։ Հարկ է, որ մենք կարողանանք Ավետարանի լույսով դուրս գալ մեր իսկ կառուցած մեկուսարանների ճաղավանդակների ետեւից, ազատագրենք ինքներս մեզ՝ ինքնապաստանության, եսասիրության, հեշտասիրության, գաղջ, միջակ «բարեպաշտությամբ» գոհանալու սովորություններից, որոնք բանտարկում են մեր հոգին եւ մարմինը, մինչդեռ դրանք սահմանված են դեպի աստվածային բարձրունքնե՛րը ճախրելու համար։ Հիշե՛նք Բախի Ջոնաթան Լիվինգսթոն ճային, ով ճախրել սովորեց՝ հաղթահարելով ահռելի բարդություններ եւ չհուսահատվելով ուրիշների կողմից չհասկացված չլինելուց.

«Ի՞նչ ես կարծում Ֆլեթչ, մենք առա՞ջ ենք անցել մեր ժամանակից... Դե՛, կարծում եմ, այստեսակ թռիչքը միշտ էլ գոյություն է ունեցել նրա համար, ով կցանկանար հայտնաբերել այն ու սովորել. դա ժամանակի հետ կապ չունի։ Գուցե, մենք նորաձեւությունից ենք առաջ անցել՝ նրանից, ինչպես թռչում է ճայերի մեծ մասը»[30]։

Դեպի Աստված ճախրել սովորելու համար մենք պետք է բացվենք նախ մեզ զորացնող Սուրբ Հոգու առաջնորդության առջեւ. «Զգիտե՞ք, թե կենդանի Աստծո տաճար եք դուք», Բ Կոր. 6, 16։ Երկրորդ, մենք պետք է առանց վախենալու բացվենք միմյանց առջեւ. մեր հոգեւոր թեկուզ փոքրիկ ձեռքբերումներով հարստացնենք միմյանց, օգնե՛նք իրար, միասին ճախրել սովորենք, գոտեպնդվե՛նք միմյանցով՝ միշտ նկատելով մեր նավակին մոտեցող, ջրերի վրայով քայլող Հիսուսին, որ ասում է յուրաքանչյուրիս. «Քաջալերվեցե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք», Մտթ. 14, 27։

Այսօր, առավել քան երբեւէ, եւ մանավանդ, այս Մեծ Պահոց օրերին, մենք կարիք ունենք միմյանց զորակցության, միասնականության, անկեղծ եղբայրական, ընկերական հարաբերությունների, փոխադարձ վստահության, որպեսզի կարողանանք նախ ապրել Կարիտասը՝ որպես հաստատություն դարձած սեր (institutional charity), որպես Ընդհանրական Եկեղեցու մեկ մասնիկ, որպես Քրիստոսի սիրո վրա հիմնված հոգեւոր մեկ ընտանիք, որ ունի մեկ առաքելություն՝ կիսելու այդ սերը նաեւ ուրիշների հետ՝ կազմակերպված, տեւական ջանքերով։

Մենք կարիքն ունենք վերլուծելու ինքներս մեզ՝ որպես սիրո հաստատություն՝ հասկանալով հետեւյալը.

1. արդյո՞ք Քրիստոսի սերը ճշմարտապես գերիշխում է մեր աշխատանքային հարաբերություններում,
2. արդյո՞ք մենք միշտ սնվում ենք այդ սիրո միակ եւ անփոփոխելու աղբյուրով եւ գրավականով՝ Հիսուս Քրիստոսով եւ նրա Սուրբ Եկեղեցու անդամների հետ միասին՝ հաղորդության մեջ,
3. արդյո՞ք մենք ինքներս բավարար չափով ապրում եւ հասկանում ենք այն սերը՝ caritas-ը, որը կոչված ենք փոխանցելու մարդկանց եւ կիսելու նրանց հետ։

Ըստ այդմ, մենք պետք է այս օրերին առավել ինտենսիվ ձեւով ուսումնասիրենք մեր հոգեւոր կազմակերպության արմատները եւ ինքնությունը՝ որպես Եկեղեցու սոցիալական ծառայություն, պետք է վերստին ընթերցենք ռազմավարության տեքստը, տեսլականը, առաքելությունը եւ մտածենք, թե արդյոք մեր իրականացրած ծրագրերը կամ նրանք, որոնք մասին մտածում ենք, լիովին համահունչ են ռազմավարության ոգուն եւ աշխատանքային սկզբունքներին, արդյոք չկան թեկուզ չնչին շեղումներ, թերացումներ՝ աշխատանքային հարաբերություններում կամ ծրագրերի մեջ, շահառուների հետ հարաբերություններում։ Մեծ Պահքը, հետեւաբար, Կարիտասի համար իր աշխատանքը ճիշտ ճանապարհի մեջ վերադարձնելու, սխալները, շեղումները սրբագրելու, գուցե, նաեւ արմատական որոշումներ կայացնելու, բեկումնային փոփոխություններ սկսելու ժամանակն է, եթե, իհարկե, կարիքը կա՝ սկսելով մանր թվացող փոքրիկ երեւույթներից, որոնք սակայն փչացնում են մեծ խճանկարը։ Որպեսզի լավ տեսնենք մեր բացերը, անհրաժեշտ է կարգի բերել նախեւառաջ մեր անհատական վարքը, մաքրել մեր ներսը, առավել բարձր մակարդակի հասցնել միջանձնային հարաբերությունները՝ Կարիտասի ընտանիքի ներսում, ապա մեր մաքրված սրտերն ու հոգիները լցնել Հիսուսի բուժիչ, զորացնող եւ ուղղորդիչ ներկայությամբ՝ ընդունել Նրա Սուրբը Մարմինն ու Արյունը՝ Սուրբ Պատարագի ժամանակ։

Միայն մեր ներքինը կարգավորելո՛վ կարող ենք հասնել մեր աշխատանքում սխալների սրբագրմանը, գործին առավել բարձր ավետարանական նկարագիր հաղորդելուն։ Որպեսզի կարողանանք ապրել ու գործադրել Մատթոսի 25-րդ գլխի տողերը՝ «Ինչ որ արեցիք իմ այս փոքր եղբայրներից մեկին, ինձ համար արեցիք», եւ որն ամեն օր կարդում եք

[30] Ռիչարդ Բախ, Ջոնաթան Լիվինգսթոն ճայը, մաս 3-րդ, Երեւան, 2017

ձեր նամակագրության մեջ, պետք է նորոգենք մեր կենդանի հարաբերությունը Հիսուսի հետ եւ **գործնականում զգանք** Նրա ներկայությունը՝ ինքներս մեր մեջ, մեր գործընկերների մեջ եւ կարիքի մեջ գտնվող մեր եղբայրների ու քույրերի մեջ, որովհետեւ դա միայն գաղափար չէ, դա փոխաբերություն չէ. դա նշանակում է **անձնապես եւ հավաքականորեն** հասկանալ Քրիստոսի խորհրդավոր Մարմնի՝ Եկեղեցու, գոյությունը։ Մենք կոչված ենք՝ Տիրոջ Մարմնի գոյությունը, անդամների անքակտելի փոխկապակցվածությունը տեսանելի դարձնել մեր գործնական սիրո՛ միջոցով, որը, սակայն, պետք է բխի մեր սրտից։

Ժամանա՛կն է՝ քնից արթնանալու, ըստ Սուրբ Պողոսի խոսքերի, ես ուզում եմ ավելացնել՝ ժամանա՛կն է՝ մեր սառն անտարբերությունից, հարմարավետությունից դուրս գալու՝ ապավինելով աստվածային անսպառ եւ անձնվեր սիրուն, բայց չմոռանալով նաեւ աստվածային արդարադատության մասին.

«Վա՛յ ինձ, երբ ելնի եղկելի մարմինս անարժան հոգիս,
Ինչպե՞ս պիտի ներկայանամ ճշմարիտ դատավորին.
Վա՛յ ինձ, երբ լապտերիս յուղը սպառվի,
Չի եթե մարի, էլ չի վառվի նա,
Վա՛յ ինձ՝ պակուցման համար այն ահեղ ու տագնապալից,
Երբ առագաստի մուտքը փակվի,
Վա՛յ ինձ, երբ լսեմ երկնավոր թագավորի վճռով կնքված
Սիրտս դող հանող եւ սարսափելի այս խոսքն ահավոր.
«Քեզ չեմ ճանաչում»,

Սբ. Գրիգոր Նարեկացի,
«Մատյան ողբերգության, Բան է, գ։

Տ. Հովսեփ
9 մարտի, 2020թ.

Կիսելով մեր հավատքի փորձառությունը

«Լայնորեն բացե՛ք ձեր սրտերը»,
Բ Կոր. 6, 13

Գոհար Շախուլյան
Հայկական Կարիտասի «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամությամբ երեխաների ցերեկային սոցիալական խնամքի կենտրոնի երաժշտաթերապեւտ

Հավատքի շնորհը ժառանգություն եմ ստացել հայրական տատիկից։ Աննիչկա տատիկս կյանքի մեծ դժվարությունների միջով էր անցել եւ հավատն ու լավատեսությունը չէր կորցրել։ Պատմում էր, որ 1937-ին երկաթուղային վարպետ պապիկիս աքսորել են Սիբիր, իսկ ինքը, շատ երիտասարդ հասակում, յոթ երեխաների հետ միասին (որոնցից փոքրը հայրիկս էր՝ 3 ամսեկան) մնացել է փողոցում։ Կյանքի այդ անասելի դժվարությունները հաղթահարել եւ իր յոթ երեխաներին կյանքին պատրաստել՝ տատիկիս օգնել է իր անսասան հավատքն առ Քրիստոս Աստված։ Փոքր հասակից տատիկս միշտ ինձ իր հետ տանում էր Սուրբ Աստվածածին՝ Յոթ Վերք եկեղեցի՝ Սուրբ Պատարագի։ Շատ էի սիրում աղոթել եւ միանալ երգեցողությանը։ Եվ ի՞նչ գիտենայի, որ Աստված ինձ համար հետաքրքիր խճանկարներով լեցուն կյանքի ճանապարհ է պատրաստել։ 1988-ի աղետաբեր երկրաշարժին հրաշքով փրկվեց մեր ընտանիքը։ 1991 թվականին՝ Հայաստանի անկախությունից հետո, Հայ Կաթողիկէ Եկեղեցին վերահաստատվեց Հայաստանում՝ վերաբացելով առաջնորդարանը Գյումրիում։ Աստծո Նախախնամությամբ ես ծանոթացա առաջին առաջնորդ երջանկահիշատակ Հայր Ներսես Արքեպս. Տեր-Ներսեսյանի հետ եւ առաջարկեցի իմ օգնությունը կազմավորելու դեռատի աղջիկների երգչախումբ՝ Պատարագի երգեցողությունը ապահովելու համար։ Այդ ժամանակ էր, որ իմ հավատքը ավելի գիտակցական դարձավ։ Սրբազան Հոր հետ բազում հոգեւոր զրույցներից հետո սկսեցի

հասկանալ Սուրբ Պատարագի խորհուրդն ու իմաստը, որ Հիսուս ներկա է Սուրբ Հաղորդության մեջ: Եվ այդպես շարունակ՝ արդեն քսանհինգ տարի, Հիսուսին ճանաչում եմ իբրեւ մեծ Բարեկամի եւ երախտապարտ եմ, որ կարող եմ Իր օգնությամբ իմ մասնագիտական կարողություններով օգտակար լինել հաշմանդամություն ունեցող մանուկներին եւ երիտասարդներին: Առանց աղոթքի եւ նվիրումի հնարավոր չէ հաղթահարել մեր կյանքի դժվարությունները:

Վարդան Տիրատուրյան
Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի նկարչության խմբակի ուսուցիչ, նկարիչ, քանդակագործ

1981-ին նվեր ստացա Նոր Կտակարանը եւ առաջին անգամ կարդալու ու ծանոթանալու հնարավորություն ստացա: Այդ տարիներին շատ դժվար էր գտնել Աստվածաշունչ, դժվար էր մարքսիստական նյութապաշտ փիլիսոփայության ազդեցությունից դուրս գալը, հեշտ չէր ուրիշ կերպ մտածելը:

Կյանքում հանդիպած շատ դժվարություններում եւ անելանելի դրություններում միակ լուսավոր ու հիմնավոր հենասյունը եղել է այն, որ մենակ չեմ՝ Աստված կօգնի:

Աշխատում եմ Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնում եւ այստեղ հավատքը հույս է տալիս հաղթահարելու բոլոր դժվարությունները: Օրեցօր ավելի եմ հասկանում «Սեր» բառի իմաստը եւ այն, որ առանց Տիրոջ օգնության չեի կարողանա աշխատել եւ իրագործել մեր ծրագրերը: Հավատ, Հույս, Սեր:

Անահիտ Զենոբյան
Հայկական Կարիտասի «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամությամբ երեխաների ցերեկային սոցիալական խնամքի կենտրոնի խմբավար

«Կարեւոր չէ, թե ինչ բարի գործ ես անում, այլ կարեւոր է, թե ինչ սրտով ես այն անում»: Այս խոսքերով եմ առաջնորդվում իմ կատարած աշխատանքի մեջ, ինչն ինձ ստիպում է միշտ լինել սրտացավ, համբերատար եւ երբեք հետ չնայել:

2011թ.-ից մինչ օրս մասն եմ կազմում Հայ Կաթողիկէ Եկեղեցու երիտասարդաց միության, ինչպես նաեւ Հայկական Կարիտասի «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների եւ երիտասարդների կենտրոնի: Գրեթե մեկ տարի մտածում էի, թե արդյո՞ք կկարողանամ անել այս աշխատանքը, արդյո՞ք այն ինձ պետք է եւ հիմա շատ եմ ափսոսում, որ այդ մեկ տարին կորցրել եմ: Կամավոր հիմունքներով սկսեցի աշխատել չորս տարի եւ արդեն հինգ տարի է, ինչ աշխատում եմ կենտրոնում՝ որպես խմբավար: Իմ այս որոշման մեջ մեծ դեր ունեցավ Եկեղեցին: Ամեն անգամ, եկեղեցի հաճախելը եւ երիտասարդական ժողովների մասնակցելը՝ այս ամենի մասին մտորելու նոր առիթ էր տալիս եւ օգնում ավելի հաստատուն լինել իմ որոշման մեջ: Կարծում եմ, որ Աստծո ներկայությունը կարեւոր է այս բարդ ու միաժամանակ հաճելի աշխատանքում, չէ՛ որ ինչպես սովորեցնում է Եկեղեցին՝ «Աստված հավատում է քեզ եւ վստահում»:

Լինելով Հայ Կաթողիկէ Եկեղեցու երիտասարդաց միության անդամ՝ կարծում եմ, որ Եկեղեցին մեզ պետք է առաջնորդի մտածելու մեր կոչման մասին: Շատ կարեւոր է, որպեսզի աղոթքով մտածենք մեր կոչման մասին: Պետք է յուրաքանչյուրս լինենք մեր ձեւով. ոչ ոք իդեալական չէ եւ պետք է փորձենք մնալ այնպիսին՝ ինչպիսին Աստված մեզ ստեղծել է: Այս ամենը մեզ տվել է Աստված, եւ այն պետք է օգտագործենք նրա փառքի համար:

Լիաննա Մարտիրոսյան
Հայկական Կարիտասի «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի խոհարար

Կյանքն հրաշալի է այն ժամանակ, երբ ներաշխարհում եւ շրջապատող միջավայրում ներդաշնակություն է տիրում, իսկ այդ ներդաշնակությունը կերտելու պահին, երբ Աստված հանդիպում է կազմակերպում քո եւ այն մարդկանց միջեւ, ովքեր մեծ ներդրում ունեն հետագա քայլերիդ ընտրության հարցում, մնում է միայն ասել՝ շնորհակալությո՛ւն, Ամենակարող Տեր Աստված:

Ես շատ շնորհակալ եմ Տեր Աստծուց, որ 1994 թվականին, երբ Հայ Կաթողիկէ Եկեղեցին վերահաստատվեց Գյումրիում, ճանապարհս տարավ այնտեղ, եւ մինչ օրս, արդեն 26 տարի, ամեն կիրակի օր սկսվում է այնտեղից։

Եկեղեցին է, որ ինձ սովորեցրեց ապրել սիրով եւ սրտացավությամբ ծառայել մարդկանց բոլոր խմբերին եւ գործել բարին: Ամեն անգամ, օրս սկսելով աղոթքով եւ Տիրոջն ասելով. «Հիսո՛ւս, ես քեզ վստահում եմ» խոսքերը, առաջ եմ գնում կյանքի դժվարություններում՝ վստահ եւ պաշտպանված։

Սեդա Պոպովա
Հայկական Կարիտասի մանկապարտեզների ծրագրի համակարգող, «Փոքրիկ Իշխան» սոցիալական կենտրոնի աշխատակից

Կյանքումս շատ դժվար ուղի եմ անցել, բայց չեմ վհատվել՝ Աստծուն ունենալով իմ մեջ, իմ կողքին: Շատ երիտասարդ էի, երբ հանկարծակի կորցրեցի հայրիկիս ու շատ ծանր օրեր անցկացրի։ Մի քանի տարի անց մայրս հիվանդացավ, սկսեցի նրա խնամքով զբաղվել։ Հիվանդության տանջալից օրերից հետո մայրս էլ մահացավ։ Այդ դժվար պահերին ինձ շատ էր օգնում իմ հավատքը, աղոթքներն առ Աստված։

Աստծո ներկայությունն իմ մեջ օգնեց հաղթահարել կյանքի դժվարություններն ու այդ ամենից զատ գտնել լավը:

Հայկ Կիրակոսյան
«Հայկական Կարիտաս»-ի Տաշիրի «Փոքրիկ Իշխան» Երեխաների սոցիալական կենտրոնի համակարգող

«Այսպես՝ ամեն աշխարհական իրեն տրված պարգեւների զորությամբ հանդիսանում է մի վկա եւ միաժամանակ եկեղեցու առաքելության կենդանի մի գործիք՝ ըստ Քրիստոսի պարգեւների չափի». (Եփս. 4,7):

Նախ ասեմ, որ իմ կյանքում հենց այնպես ոչինչ չի եղել եւ վստահ եմ, որ իմ քայլերի հաջորդականության մեջ գործում է Աստծո նախախնամությունը։ Նույնիսկ եղել են դժվար պահեր, երբ թվում էր, թե ամեն ինչ փակուղում է, բայց երբեք չեմ դադարել աղոթել Աստծուն, ու կատարվել են հրաշքներ՝ իմ խնդիրները լուծելի են դարձել։ Մի անտեսանելի ձեռք, մի խորհրդավոր ձայն ինձ հուշել է, թե ինչպես վարվեմ ու գործեմ, եւ ելք միշտ գտնվել է։

Հավատքն առ Աստված իմ մեջ սերմանվել է փոքր հասակից։ Ամառը՝ արձակուրդներին, գնում էի գյուղ։ Ամեն գիշեր, երբ պառկում էինք քնելու, տատս ասում էր. «Աղոթե՛նք, նոր քնենք, որպեսզի Աստված մեզ գիշերն էլ պաշտպանի»։ Աղոթքներից հիշում եմ «Ողջույն քեզ Մարիամ»-ը, «Հայր մեր»-ը։ Սկզբից չգիտեի աղոթքները, հետո, օրերի ընթացքում, ես էլ մտքումս արտասանում էի այն տողերը, որոնք անգիր էի արել, բայց հերթականությամբ չէի կարողանում հիշել, որովհետեւ այդ ժամանակ դժվար բառեր էին ինձ համար թվում։

Այժմ, երբ տարիների հեռվից հայացք եմ գցում հետ՝ հիշում եմ, որ մեր տանը ունեինք Քրիստոսի խաչելության պատկերը ու էլի սրբապատկերներ, եւ հաճախ էի տեսնում հայրիկիս այնտեղ աղոթելիս։ Բնականաբար, այդ ամենը չէր կարող իր հետքը չթողնել ինձ վրա։

Ութ տարեկանում իմ կարդացած առաջին գիրքը «Մանուկների Աստվածաշունչ»-ն էր՝ գեղեցիկ նկարազարդված էջերով։

Հիսուսի բարի կերպարը եւ ծնողներիցս ժառանգած մարդկային որակները, բնականաբար, ձեւավորում էին իմ բնավորությունը։ Եվ հիմա էլ, երբ ինքս ինձ համեմատում եմ իմ մանկության տարիների հետ՝ նկատում եմ, որ բնավորությանս մեջ շատ բան նույնն է մնացել, ուղղակի հասուն տարիքում աշխարհընկալումն է տարբեր լինում եւ երեւույթներին, մարդկային վարվելաձեւերին պատասխանում կամ հարկ եղած դեպքում չես պատասխանում՝ հետեւություններ անելով։ Ինչպես նրան, որ եղել են դեպքեր, երբ առնչվել եմ այնպիսի մարդկանց հետ, ովքեր նույնիսկ գայթակղության ու չարանալու պատճառ են հանդիսացել, բայց միեւնույնն է՝ չեմ փոխվել, չեմ չարացել։ Չէ՞ որ Աստված սիրող հայր է եւ ներում է բոլորիս մեղքերը։ Այդպես էլ մենք պետք է լինենք բոլոր նրանց հանդեպ, ովքեր մեղավոր են գտնվել մեր նկատմամբ։ Վստահ եմ, եթե մարդիկ գիտակցեին, որ Աստված մարդուն ստեղծել է իր պատկերով եւ նմանությամբ, ապա՝ չէին նեղացնի իրար, չէին բամբասի, չէին քննադատի, այլ կփորձեին օգնել, բարի խորհուրդ տալ։

Հավատքն, արդեն նաեւ գիտակցական մակարդակում, իմ մեջ ամրապնդվեց 2015թ.-ին, երբ ընդունվեցի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Տաշիրի «Փոքրիկ Իշխան» երեխաների սոցիալական կենտրոն՝ որպես կամավոր։ Ծանոթացա տեղի հոգեւոր հովիվ Հայր Ներսես Վրդ. Գալստյանի հետ, մասնակցեցի Հայ Կաթողիկէ Եկեղեցու կողմից կազմակերպված երիտասարդական հավաքներին, քրիստոնեական դասընթացներին։ Ամեն նմանատիպ հանդիպում ավելի էր ամրապնդում իմ մեջ հավատքն առ Աստված եւ գիտակցությունը, որ մենք Ընդհանրական Եկեղեցու զավակներն ենք, ովքեր իրենց վկայությամբ, իրենց կերպարով, իրենց գործերով պետք է օրինակ լինեն մյուսների համար։

Միշտ իմ աղոթքների մեջ ասում էի, «Աստվա՛ծ ջան, այնպես արա՛, որպեսզի դառնամ հասարակության համար պիտանի մարդ»։ Այժմ, երբ աշխատում եմ Տաշիրի «Փոքրիկ Իշխան» երեխաների սոցիալական կենտրոնում, հասկանում եմ, որ հենց այնպես ոչինչ չի լինում եւ Աստծո կամքն է եղել այսպես, որովհետեւ սիրում եմ աշխատանք-ծառայությունս, որը Կաթողիկէ Եկեղեցու սոցիալական ձեռքն է՝ մեկնված դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքներին եւ նրանց երեխաներին, սիրում եմ երեխաներին, գործընկերներիս ու այն աշխարհը, որը Աստված է արարել։

Քեզ համար միշտ աղոթող՝
Հայկ Կիրակոսյան

Անի Աղայան

«Հայկական Կարիտաս»-ի Գյումրիի «Փոքրիկ Իշխան» Երեխաների սոցիալական կենտրոնի սոցիալական աշխատող

Իմ կյանքի ամբողջ ընթացքում ես կամա թե ակամա հայտնվում եմ քրիստոնեության հետ առնչվող տարբեր կենտրոններում, ինչի

համար ինձ երջանիկ եմ համարում, քանի որ միշտ մոտ եմ գոնե Աստծո խոսքին, մասնակից եմ նրա կամոք կատարվող բարի գործերին: Գուցե լիակատար ու արժանի քրիստոնյա չեմ, բայց օրվա մեջ իմ ամեն բառով ու արարքով փորձում եմ չհակառակվել այն ամենին, ինչ գրված է Աստվածաշնչում:

Ես զգում եմ Աստծո ներկայությունն իմ կյանքում, թեկուզ չնորհիվ այն փաստի, որ շատ հաճախ իրականություն դարձող երազներ եմ տեսնում:

2016 թվականի դեկտեմբեր ամսին ես երկու օր նույն երազը տեսա, որ իբր եկեղեցու հարեւանությամբ՝ ձյան մեջ, մի թմբլիկ տղա էր պառկած, ում գրկում եմ ու տուն գալիս: Երկրորդ օրը նույն երազն էր, միայն թե երեխային գրկելուց առաջ ինձ տանում են հիվանդանոց: Ես դեռ չգիտեի որ բալիկ եմ ունենալու, ու հետո, երբ իմացա՝ համոզված էի, որ երազիս համաձայն, տղա է լինելու եւ ինձ վիրահատելու են: Այդպես էլ եղավ: Տղաս ծնվեց 8 ամսականում՝ կեսարյան հատմամբ:

Այս տարի, 2020-ի հունվարի Սբ. Ծննդյան գիշերը երազ տեսա, որ երկու տղաներս խաղում են մի աղջիկ երեխայի հետ. ես կրկին միտք ու կասկած անգամ չունեի, բայց որ այդ օրն էի երազ տեսել, համոզված էի, որ նոր բալիկի մասին կլսեմ շուտով: Կրկին երազս ճիշտ էր: Ես սպասում եմ իմ երրորդ երեխային ու, չնայած դեռ ոչինչ պարզ չէ՝ գիտեմ, որ նա աղջիկ է:

Աստված միշտ է խոսում մեզ հետ, նույնիսկ մարդկանց միջոցով մեզ ուղերձ է հղում: Մնում է լսել ու հավատալ:



Արմենուհի Սարգսյան

«Հայկական Կարիտաս»-ի Գյումրիի «Փոքրիկ Իշխան» Երեխաների սոցիալական կենտրոնի սոցիալական աշխատող

1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակ երկրաշարժը շատերի համար կործանարար էր: Ես չենքի փլատակների տակ էի՝ ամուսնուս եւ երկու աղջիկ երեխաներիս հետ: Ես հղի էի իմ երրորդ երեխայով:

Երբ մենակ փլատակների տակ էի եւ ինձ անդադար ցավազրկող-քնաբերներ էին ներարկում, աչքերիս առաջ տեսա սպիտակ շորերով մի «մարդու». գուցե Աստվա՞ծ էր: Նա ձեռքերը պարզեց, որպեսզի ինձ գրկեր ու տաներ: Այդ ժամանակ մոտեցավ ոտքից գլուխ սեւ հագնված մի կին, շոշափեց ոտքերս եւ ասաց, որ պետք չէ ինձ տանել, քանի որ ես լավանալու եմ:

Երկար ժամանակ Մոսկվայում հղի վիճակում բուժումներ ստանալուց հետո, հետ վերադարձա հունիսին Գյումրի եւ երազ տեսա. Աստված ինձ տվեց մեծ սեւ բանալի, որի վրա գրված էին թվեր: Ընտանիքիս անդամներին ասեցի, որ գրեն թվերը եւ հիշեն որ ես 11, 7, 5-ին ունենալու եմ տղա երեխա: Այդ ժամանակ բոլորը գրեցին թվերը եւ հաշվեցին, որ 7-րդ ամսի 11-ն էր, իսկ 5-ը մնաց անհայտ: 7-րդ ամսի 11-ին իմ հարազատները հավաքվել էին մեր տանը, իսկ հայրս բժշկին ասեց, որ երեխան ժամը 5-ին է ծնվելու: Այդպես էլ եղավ:

Ես համոզված եմ, որ Աստված ինձ կյանք չնորհեց՝ հանուն իմ երեխայի: Այսօր ես աշխատում եմ Հայկական Կարիտասում եւ հնարավորություն ունեմ մասնակից լինել հոգեւոր զրույցների, որոնց կարեւորությունը գնահատել եմ աշխատանքիս ընթացքում: Աշխատելով դեռահաս երեխաների հետ՝ փոխվել է իմ վերաբերմունքը կյանքի նկատմամբ, լսում եմ նրանց խնդիրները, դարձել եմ ավելի համբերատար, հանդուրժող եւ հետեւություններ չեմ անում ակնթարթորեն, որոշումներ կայացնելիս հաշվի եմ առնում ամեն մի մանրուք: Հեռացրել եմ ինձանից քննադատական մտածողությունը: Շնորհակալություն եմ հայտնում հոգեւոր զրույց մատուցող եկեղեցու սպասավորներին եւ Աստծո նվիրյալներին, ովքեր հոգեւոր սնունդ են տալիս դեռահաս, հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, ծերերին եւ Հայկական Կարիտասի ողջ անձնակազմին: Հոգեւոր սնունդ ստացող յուրաքանչյուր անձ դառնում է հասարակության ավելի լիարժեք անդամ, որն ապահովում է ունենալ առողջ հասարակություն:

Կազմող եւ խմբագիր՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Կազմելու եւ սրբագրման աշխատանքներին
օգնեցին՝ Հրանուշ Սարգսյանը եւ Անի Ցոլակյանը

Հոդվածներով մասնակցություն ունեցան
Հայկական Կարիտասի աշխատակիցները

Տպագրողներ՝

«Հայկական Կարիտաս» բարեսիրական
հասարակական կազմակերպություն

Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ
Արեւելյան Եվրոպայի Հայ Կաթողիկէ
Առաջնորդարան

Գյումրի, 2020թ.

Տպաքանակ՝ 300

© Հայկական Կարիտաս Armenian Caritas